№ 146—ՏԱՍՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 146

1894 ԴԵԿՏԵՄԲԵՐ 16 (28) ՈՒՐԲԱԹ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ". կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang."

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

,,ԱՐՁԱԳԱՆՔ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելիամինովսկի փողոց, № 22, տուն Խանդալամեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։

Օտարաքաղաքցիք պէտք է դիմեն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang»։

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

1895-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆ.

Այն անձինքը և հաստատութիւնները, որոնք ԱՅԺՄԷՆ ԻՍԿ կըստորագրուին 1895 թուի «Արձագանքին», կըստանան համարները բաժանորդ գրուելու օրից՝ վճարելով ընդամենը տասը ռուբլի։

ԹԻՖԼԻԶԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Երեքշաբթի դեկտեմբերի 20-ին

Յօգուտ Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԻ

RIGOLETTO

Օպերա 4 գործող.

Մասնակցութեամբ տիկ. Էյգէնի, պ. Մաքսակովի և այլոց։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Անգլիական մամուլ և հայկական խնդիր։ Լոնդոնից։ Տաճիկ զօրքերի նոր անգթութիւններ։ Երեք մեծ պետութիւնների համաձայնութիւնը հայկական խնդրի վերաբերմամբ։ Գերմանիայի բռնած դիրքը հայոց խնդրի վերաբերեալ։ Ռուսաց դեսպանի նօտան հայոց խնդրի առիթով։ Տաճկաց տէրութեան երկու պաշտօնական զեկուցումն։ Գերմանիայի դերը հայկական խնդրում։ Միջին Եւրոպայի պետութիւնք և հայկական խնդիր։ Պետերբուրգի տաճկաց դեսպանի հերքումը։ Էրզրումից։ Թիֆլիզի քաղ. դպրոցները։ Նամակ Ախալցխայից։ Գիւղատնտեսական բարձրագոյն խորհուրդ։ Միջազգային բժշկական ժողով։ Ջեմսկի ուսագների իրաւանց սահմանափակելու խնդիր։ Երկաթուղու գիծ Թիֆլիզից մինչև Կախէթ։ Պ. Բաշինջաղեանի ցուցահանդէսը։ Անձնասպաններ։ Նամակ Սուչավայից։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

ՏԱՃԿԱՑ ՀԱՅԱՍՏԱՆ. — Նամակ Բաղէշից։ Լուրեր։ Մի մեծ հրդեհ Կիլիկիայում։ Նամակ Ապահոնիքից։

ՖԵԼԻԵՏՕՆ. — Մուշ-Տարօն։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՏԵՂԵԿԱՑՈՒ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

(«Daily News»—14 dec.)

«Daily News» ի Բերլինի թղթակիցը 13-ից դեկտ. գրում է յիշեալ լրագրին, որ «Vossische Zeitung» ի Կ. Պոլսից ստացած տեղեկութեանց նայելով Բ. Դուռը շատ վրդոված է անգլիական միջամտութեամբ հայկական խնդրին։ Հաւատացնում են, որ ներկայ մեծ վէզիրը հրաժարական կը ստանայ և նրան կը փոխարինէ Քեամիլ փաշան կամ Ճաքիր փաշան։

Նոյն լրագրի բուտ Վեննայի թղթակցի տեղեկութեանց Պարսկաստանի հայերը եռանդով դրամական հանգանակութիւն են անում յօգուտ իրանց հաւատակիցների, որոնք վնաս են կրել տաճկական բռնութիւնից, Հնդկաստանի հայերը նոյնպէս մեծ դրամական նպաստներ են ուղարկում Տաճկա հայաստանի թշուառ հայերի համար։

—

Փարիզի հայերը, Լոնդոնում Սէն-Մարտէն հալլէում 17 ին դեկտ. տեղի ունենալիք միտինգի համար ներկայացուցիչ և պատգամաւոր ընտրել են Իսկէնդէրին, Մելիք Մէնասեանին և Ճնորհքին (Chenork)։

—

Կ. Պոլսի կաթոլիկ հայերի պատրիարք Ազարեանը, իւր զեկուցման մէջ Պապին, հաստատում է այն բռնութիւնները, որոնք կատարել են Տաճիկները Հայաստանում։

—

ԼՈՆԴՈՆԻՑ հեռագրում են «Նովոստի» թերթին 7-ից դեկտեմբերի.

«Բ. Դուռն առաջարկեց պետութիւններին, իրանց լիազօր ներկայացուցիչներն ուղարկել Հայաստան, որոնք հըսկէին այնտեղ ներմուծելիք բարեփոխութիւնների վրայ»։

(«Times» 15 dec.)

ՎԱՇԻՆԳՏՕՆ, դեկտ. 14-ին.

Յայտնի է, որ Սուլթանը յետ առաւ այն հրաւէրը, որ ուղարկել էր Միացեալ-Նահանգներին, առաջարկելով մի անդամ նշանակել հայկական խնդրի համար կազմուելիք քննիչ մասնաժողովում. այս քայլը թելադրող պատճառն այն [illegible] պայմաններն էին, որ Կլիվլէնտը հարկ է համարել դնել ամերիկական ներկայացուցչի վրայ. այդ պայմանների զօրութեամբ նա կարող պէտք է հանդիսանար միւս պետութեանց պատգամաւորների ընդհանուր գործողութիւններին մասնակցել։ Հաստատում են, որ հասարակապետութեան Նախագահ Կլիվլէնտը այս գործին մասնակցելու ստիպուած էր իրեն մեծ քանակութեամբ զանազան բազմամարդ միտինգների և բազմաթիւ ընկերութիւնների կողմից ներկայացրած խնդրագրերով։ Բայց անհրաժեշտ պահանջին տեղի տալով հանդերձ, նա կամեցաւ իրան ազատ պահել եւրոպական պետութեանց դժգոհութիւնից, որովհետև նա Սուլթանի հրաւէրին հետևելով մի տեսակ մուտք էր գործելու նոցա (պետութեանց) ազդեցութեան շրջանը։ Այսպէս ուրեմն միստր Ջիւէտտին տուած հրահանգը իսկապէս մի զգուշութիւն է, որպէս զի Միացեալ Նահանգները ակամայ չխառնուէին այն միջազգային տարակուսութիւնների մէջ, որոնք կարող են ծագել քննիչ յանձնաժողովի արած հետազօտութիւնների հրատարակութեամբ»։

—

ՅԱՍՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏԻՆԳ

Ստեվէնսընը և Ճվաննը, որոնք հասարակական ցասման միտինգ են կազմում Սէն Մարտէնս—Տօուն հալլէում երկուշաբթի 17 ին (ն. տ.) հետևեալ անձինքներից օր առաջ ստացել են մասնակցելու խոստումը. Կանոն Մակկօլ (Canon Maccoll) և Կանոն Չարլզ Գոր (Canon Charles Gore)—ներկայացուցիչներ անգլիական եկեղեցւոյ. դ-ր Նիւման Հօլ (d-r Newman Hall), դ-ր Բարատտ (d-r Baratt), դ-ր Կլիֆորդ (d-r Clifford), դ-ր Հօրտօն (d r Horton), Ռօջէրս (Guimes Boggers), պրօֆեսոր Բէտ (Professor Bett)—Նօնկօֆօրմիստներից. Սէր Պիզ (Sir Y. W. Pease)—«Բարեկամների Ընկերութեան» կողմից, և պ. Զինգէրը (Singer)—հրէաներից։ Դ-ր Բարօմանը—Անգլիայի հայ հաւատացելոց համայնքի պարագլուխը (The Very Rev. D-r Baroman) հայ ազգային եկեղեցւոյ պաշտօնական ներկայացուցիչը կը լինի։

—

Կոստանդնուպօլսից ստացած տեղեկութիւններին նայելով, վճռուած է որ հայաստան ուղարկուի քննիչ յանձնաժողով, որ կազմուած է Միստր Գրէվից (M-r Graver), Բիթլիսի անգլիական հիւպատոսից և Ռուսաստանի ու Ֆրանսիայի մի-մի ներկայացուցիչներից։ Փոքր Ասիայի զանազան գաւառներից գանգատներ են գալիս որ սաստիկ հալածանքներ են լինում։ Ամեն տեղ հայերին բանտարկում են։ Հաղորդում են որ Բիթլիսում ոչ մի ընտանիք չկայ, որի գլխաւորը բանտարկուած չլինի։

***

«Բէյտերի գործակալութիւնը» հեռագրում է մայրաքաղաքի թերթերին, թէ Աթէնքի հայերը տեղեկութիւն են ստացել, որ Տաճկաստանի հայերը նոր յարձակման են ենթարկուել։ Վանի նահանգապետ քուրդ Բաքրի փաշան գրաւել է մի քանի գիւղեր և նրա զինուորները այդ գիւղերում անգթութիւններ և բարբարոսութիւններ են կատարել։ 126 հայեր բանտարկուած են։

***

«Daily Graphic» մի յօդուած է տպագրել, որ բաւական աղմուկ է պատճառել։ Այդ յօդուածի մէջ առանձին ուշադրութիւն է դարձնվում այն համաձայնութեան վրայ հայկական խնդրի վերաբերութեամբ, որ կայացնելու տրամադիր են երեւում երեք մեծ պետութիւն մի կողմից և Բ. Դուռը միւս կողմից։ «Եթէ միւս պետութիւններն իրենց հեռու են պահում, ասում է լրագիրը, այդ միայն այն պատճառով է, որ նրանք հիմնաւոր պատճառներ ունեն ծուռ աչքով նայել անգլիական-ֆրանսիական յարաբերութիւնների վրայ, որ իր անխուսափելի հետևանքները կունենայ միջազգային գործերում»։

***

«Standard» լրագիրը տպագրել է իր Կ. Պօլսի թղթակցի հետևեալ հեռագիրը, որ վերաբերում է Գերմանիայի դերին հայկական խնդրում. «Թէև զրաքննիչն արգելել էր իմ երեկուան հեռագիրս, որի մէջ ես հաղորդում էի թէ ռուսական և ֆրանսիական կառավարութիւնները վճռել են Անգլիայի հետ միասին գործել, ուստի և հրամայել են Էրզրումի իրենց հիւպատոսներին ներկայ լինել տաճկական յանձնաժողովի նիստերին, հայկական գործերը քննելուս, այժմ ես կատարեալ հնարաւորութիւն ունիմ յայտնել որ դեռ անցեալ շաբաթ երեք պետութեանց մէջ կատարեալ համաձայնութիւն է կայացել։ Այդպէս ուրեմն Սէր Ֆիլիպ Կէրրին (Կ. Պօլսոյ անգլիական դեսպան) մեծ և կարևոր դիպլօմատիքական յաղթութիւն տարաւ, չնայելով որ Գերմանիան դիմադրում էր մասնակցել Անգլիայի հետ այն մեծ գործին, որին ձեռնարկում են մարդասիրական նպատակներով։»

***

«Le Nond» լրագիրն ասում է թէ «անհիմն է Լոնդոնի լրագրների հաղորդած այն լուրը, երբ թէ Կ. Պօլսոյ ռուսաց դեսպանը հայկական գործերին վերաբերեալ նօտա է ներկայացրել Բ. Դռան։»

***

ՏԱՃԿԱՑ ՏԷՐՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

—

Վանայ կուսակալութիւնը նոյեմ. 5 թուականով հետևեալ հեռագիրն ուղղած է Ներքին գործոց նախարարութեան.

«Երճէքի կողմերը պտտող շրջուն ոստիկան-զինուորներ իմանալով որ մէկ քանի անծանօթ աւազակներ այդ գիւղախումբի մէկ գիւղին ոչխարները քշած տարած են, սկսեր են հալածել զանոնք։ Տեղի ունեցած ընդհարման պահուն ոստիկան-զինուոր մը ու ժողովրդէն երեք մարդեր մեռեր են գնդակէ մը վիրաւորելով և ուրիշ ոստիկան-զինուոր մ'ալ վիրաւորեր է։ Ասոր վրայ անմիջապէս կենդրոնի Թապուր Աղասին և պէտք եղածին չափ ոստիկան-զինուորներ ղրկուած էին այդ աւազակները ձերբակալելու համար։

«Արդ, Թապուր Աղասին տեղեկագրած է թէ Պօղազ Քէսէն գիւղին մօտենալուն՝ իմացեր են թէ մէկ քանի աւազակներ պահուըտած են Ալաթէ լերան քարայրներուն մէջ. ուստի այդ տեղը պաշարուելով առաջարկուեր է աւազակաց որ անձնատուր ըլլան. սակայն ասոնք զէնքի դիմելով ոստիկան-զինուորներէն տասնապետ մը սպաներ են. այս վերջիններն ալ փոխադարձաբար շարժելով աւազակներէ վեցը ողջ ձերբակալեր են և թէև կըսուի որ անոնց երեքը վիրաւորելով մեռեր են, սակայն տակաւին ստոյգ տեղեկութիւն մը չէ առնուած։

Նոյն միջոցին գիշերը վրայ հասած և ձիւնի սաստիկ փոթորիկ մը ծագած ըլլալով, կարելի չէ եղեր հետապնդումը առաջ տանիլ և աւազակները տեղւոյն բնական դժուարութիւններէն և գիշերուան մթութեան հետ ձիւնի փոթորիկէն օգտուելով փախեր են։ Սակայն հետապնդումը կը շարունակուի։ Աւազակներն ալ քիւրդի տարազ կրող հայերէն էին. հետևաբար խնդիրը քննելու համար նահանգին կենդրոնական ընդհանուր դատախազի օգնականը պէտք եղած պաշտօնէից հետ անմիջապէս ղրկուած է։ Ասոնց վերադարձին ձեռք բերուած տեղեկութիւնները մատուցուելու պայմանաւ առ այժմ ներկայս կը հաղորդուի իբրև տեղեկութիւն»։

—

Նոյն կուսակալութիւնը, ի պատասխանի, նոյեմբ. 12 թուականաւ հետևեալ հեռագրերն ուղղած է Բարձր. Մեծ-Եպարքոսին.

«Նոյեմբ. 5 թուականով Ներքին գործոց նախարարութեան ուղղեալ ընդարձակ հեռագրոյս մէջ տեղեկագրուած դէպքը մանրամասնօրէն քննելու համար նահանգին կենդրոնական ընդհանուր դատախազի օգնականը ղրկուած էր։ Արդ այս պաշտօնեայն երէկ վերադառնալով տեղեկագիր մը տուաւ, որով յայտարարած է թէ հաստատուած է, որ այդ ընդհարման համարձակող աւազակներն արդարև քսան հայերէն կը բաղկանան՝ նոր հրազէններով զինուած։

Ասոնց վեցը հայոց խռովարարաց ընկերութեան անձնուէրներէն են, որք բազմաթիւ ոճրագործութեանց համար դատապարտուած ըլլալով ասկից առաջ Պարսկաստանի կողմերը փախած էին և միւսներն ալ Վանայ քաղաքին և Պօղազ Քէսէնի ու Հէզարէի գիւղերու ժողովուրդէն։ Ընդհարումը իրիկուան մօտ կատարուած ըլլալով, գիշերը վրայ հասեր ու նոյն պահուն ձիւնի սաստիկ փոթորիկ մը ծագեր է, և աւազակներն այդ պարագայէն օգտուելով անոնցմէ վեց անձնուէրները նորէն Պարսկաստան փախեր են, իսկ միւս գիւղացիներն ալ իրենց գիւղերը, Պօղազ Քէսէն ու Հէզարէ գիւղացիներէն անոնք, որք այդ գործին մասնակցած էին, ինչպէս նաև ասոնց՝ Ալաթէ լերան մէջ պահուըտած ատեննին զէնք, մթերք, հրանիւթ և այլ պիտոյքներ տանող անձինք՝ ընդամենը տասնըչորս հոգի ձերբակալուած են և իրենց նկատմամբ օրինական քննութիւնք կը կատարուին։ Ատոնք յանձնուած են դատական պաշտօնէից։»

(«Արև.»)

***

«Hambourg Correspondent»-ը հայկական խնդրի վերաբերմամբ ասում է, թէ «Գերմանիան հարկաւոր չէ գտնում ուղղակի միջամտել հայկական գործերին։ Բերլինում համոզուած են, որ Տաճիկ կառավարութիւնն ամեն միջոց գործ կը դնի ճշմարտութիւնը պարզելու և չարագործութիւններին վերջ տալու համար»։

***

«Morning Post» մատնացոյց անելով այն հանգամանքի վրայ, որ հայկական խնդրի համար կազմուած քննիչ յանձնաժողովի մէջ չկան եռապետական դաշնակցութեան ներկայացուցիչները, պահանջում է որ հասարակութեան բացատրուի միջին Եւրոպայի պետութեանց վարմունքի այդ պատճառը։ «Եթէ ճշմարիտ—ասում է «Morning Post»—այդ տէրութիւնների հետ համաձայնութիւն չէ կայացել, այն ժամանակ կարող է պատահել որ դրանք էլ քննութիւնից յետոյ չընդունեն յանձնաժողովի կայացրած վճիռները։ Այդպիսով յանձնաժողովի աշխատութիւնների հետևանքը մի այնպիսի տարաձայնութիւն կը ծագեցնի, որ կարող է շատ տխարալի հետևանքներ ունենալ Հայաստանի համար»։

***

Պետերբուրգի տաճկական դեսպանութիւնը «Նովոյէ Վրեմիայի» մէջ հերքում է «Times»-ի հաղորդած այն լուրը, թէ Մուշում մի հայ եպիսկոպոս է բանտարկուած։ Իսկ մենք «Նովոստից» իմանում ենք, որ այդ լուրը վերաբերում է Կիլիկիայի եպիսկոպոսներին, որոնցից մէկը ոչ թէ բանտարկուած է այլ կախուած։

***

ԷՐԶՐՈՒՄԻՑ գրում են Տաճկաստանի լրագրներին թէ Ջիլան աշրաթի քրդերից 189 տնուոր 1193 գաղթականներ իրենց գտնուած գիւղերուն մէջ բնակութիւն հաստատած են և 79 տնուոր 546 գաղթականներ—նորակազմ հինգ գիւղերու մէջ»։ Կասկած չկայ որ այդ քրդերը բնակուած են այն դատարկուած գիւղերում, որտեղից գաղթել են հայերը և ուր կոտորուել են հայերը։

***

Ինչպէս յայտնել էինք «Արձագանքի» անցեալ համարներում Թիֆլիզի քաղաքագլուխ պ. Իզմայլեանը մանրամասն զեկուցումն էր տուել պատշաճաւոր իշխանութեան և խնդրել պարզել այս հարցը թէ Թիֆլիզի քաղաքային դպրոցներն արդեօք հասարակական են համարվում թէ մասնաւոր։ Այդ առթիւ երեքշաբթի դեկտեմբ. 13-ին նիստ է կայացել քաղաքային գործերին վերաբերեալ նահանգական ատենում։ Նիստին մասնակցում էին Թիֆլիզի նահանգապետ իշխան Շերվաշիձէն, նրա օգնական կոմս Տեզենհաուզէն, նահանգական դատարանի պրօկուրօրի պաշտօնակատար պ. Կրասօվսկին, արքունական պալատի կառավարիչ պ. Նավալիխին, Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու պ. Եանովսկին, Թիֆլիզի քաղաքագլուխ պ. Իզմայլեանը, և քաղաքի կողմից ներկայացուցիչ պ. Գ. Եւանգուլեանը։

Չորս ձայների մեծամասնութեամբ երեքի դէմ, նիստը վճռեց թէ այդ դպրոցները պիտի համարուեն հասարակական այնպէս, ինչպէս բացատրում է ուսումնարանական իշխանութիւնը։

***

Կովկասի երկրագործները և գիւղատնտեսները խնդիր էին ներկայացրել պետական կալուածների և երկրագործական նախարարութեան, որ Թիֆլիզում հաստատուի գիւղատնտեսական բարձրագոյն խորհուրդ, տեղական գիւղատնտեսական ընկերութիւններից, պետական հաստատութիւններից, որոնք այս կամ այն առնչութիւնն ունին գիւղատնտեսական արդիւնաբերութեան հետ, և տեղական հողատէրերից։ Այժմ ինչպէս հաղորդում է «Բիրժ. Վեդոմ.», այդ միջնորդութիւնը մեծ համակրութեամբ է ընդունուել նախարարութեան մէջ։

***

Մոսկուայի համալսարանի բժշկական ֆակուլտետի պրօֆեսորներից առանձին յանձնաժողով է կազմուած որ պէտք է 1897 թուին Մոսկուայում կայանալիք միջազգային բժշկական ժողովի ծրագիր մշակէ։ Յանձնաժողովին մասնակցում են բժշկական բաժնի բոլոր պրօֆեսորները Ի. Կլէյնի նախագահութեամբ։

***

Մայրաքաղաքի թերթերը հաղորդում են իբր թէ օրէնսդրական շրջաններում հերթական հարցերի շարքում տրուած է և ջեմսկի ուսագների մի քանի իրաւանց սահմանափակելու խնդիրը

***

Մայրաքաղաքի լրագրները լսել են թէ թոյլ է տրուած երկաթուղու գիծ անցկացնել Թիֆլիզից մինչև Կախէթ։ Ճանապարհը պիտի շինէ Կովկասեան երկաթուղու վարչութիւնը գանձարանի հաշուով. շինութեան համար յատկացրած է երկու միլիոն ռուբլի։

***

Մեր տաղանդաւոր նկարիչ պ. Բաշինջաղեանի պատկերների ցուցահանդէսը այս անգամ, ինչպէս երևում է, մեծ յաջողութիւն է ունեցել Բագւում։ Ինչպէս տեղական «Կասպի» լրագիրն է հաղորդում 22 նըկարներից վաճառուել են 13 և նոր պատուէրներ են տուել նկարչին։ Յուցահանդէսն այցելել են 1400 հոգի։

***

Բագուի փոստ-հեռագրատան ծառայողների անձնասպանութեան գործելը կարծես վարակիչ կերպարանք է ստանում. Դեռ նորերս այդ հեռագրատան ծառայող համալսարանական երիտասարդ Ամալեկելին անձնասպանութիւն գործեց, իսկ այժմ տեղական լրագիրը հաղորդում է, որ կիւրակէ օրը նոյն հաստատութեան տէլէնիկոս Կոնստանդին Երկայնաբացուկ. Արգութեանը նոյնպէս անձնասպանութիւն է գործել։

* * *

ՆԱՄԱԿ ՍՈՒՉԱՎԱՅԻՑ

Արժանապատիւ
Խմբագիր Տէր.

Խնդիր կը մատուցանէ տեղւոյս ազգային հոգաբարձութիւնը, որ բերև ազգասէր անձը ունենաք զմեծ բարեհաճութիւնը, սոյն այս ալ վար գրուած քանի տող Ազգարարութիւնը Ձեր պատուեալ թերթին մէջ հրատարակել։

Աւստրիոյ Պուգովինայի երկիր Սուչավա քաղաքի մէջը գտնուած Լուսաւորչական Ազգիս հայոց գաղթականութեան ազգապետութիւնը և սրբոյ եկեղեցեաց հոգատար անձինքը յայտ առնեն թէ ունին յոյժ մեծ պետուականութիւն ուշիմ և զուարթ քահանայէ մը կամ թէ վարդապետ մն ալ կրնայ ըլլալ, միայն թէ ուզածնին այս է որ նախ, եւրոպական ձևի աշխարհիս ազնուութիւնները ճանչցող մը և գիտնական, պարկեշտ ու տեսօք անձ մը և նախ. ամենէն առաջ այս որ Եւրոպայի լեզուի մը տեղեակ, որնոր առաջին կարգի գերմաներէնի համար կը փափագուի. բայց եթէ չէ, նա, էն քիչը գոնէ գաղիերէնի գիտցող, որ տեղւոյն հանգամանաց և ուզածին համեմատ ներկայացող մը ազգին կարենայ ըլլալու օտար ազգերու դիմաց։

Որու համար յիշեալ ազգապետութիւնը կ'առաջարկէ խոստանալով նախ որոշակի թոշակ մը տարեկան 2000 մինչ 2,400 ֆրանք, այնուհետև բնակարան մը բնակելու համար և երրորդ բոլոր կէլուր յիշուած եկամուտը բառ մերս հայաստանեայց ազգիս հին սովորութիւններուն վերաբերեալ. բայց միանգամայն կը խնդրէ որ օր առաջ բառ ալ վեր գրելոյ համեմատ գտնուող պատուելի անձը, որ ունի զբարեհաճութիւնը և զհամոզութիւնը ասոր համար, նա առանց ուշ մնալու բարի կամենայ ազդ առնել այս հասցէով Warderes Carabet Bitter von Prunkul Armen, Culdus Pracsident Suczava Bucovina Austria, միատեղ խրկելով ղունեցած վկայականներն ալ ցցնելով թէ որտեղացի է և թէ որ դպրոցի աշակերտ է եղեր։

Սուչաւայի հայոց Ազգային Հոգաբարձութեան

Նախագահ՝
Ասպետ Վարդերէս Կարապետ Ֆօն Բրունգուլ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*** Վերջերս «Մուրճ» ամսագրի մէջ տպագրուած էր պ. Բաշինջաղեանի մի փոքրիկ վէպիկը՝ «Մուրացկաններ» վերնագրով։ Վէպիկը բաւական կոկիկ էր և ճշգրիտ և նրա մէջ շատ լաւ նկարագրուած է մի ինչ որ Ջուն-Ջաքէ։ Այդ ճարպիկ Ջուն-Ջաքէն մուրացկանների խրնամակալ-պարագլուխ է. կոյրերի, կաղերի, քաչալների, անդամալոյծների և ամեն տեսակ հաշմանդամների։ Նա օրն ի բուն պտտում է քաղաքի բոլոր անկիւնները, փնտրում է հաշմանդամ մուրացկաններ, բերում նրստեցնում է կամ կամուրջի վրայ, կամ քաղաքի որևէ բազմամարդ փողոցում ու ինքը նրա կողքին կանգնելով անց ու դարձ անողներից խնդրում է՝ «ողորմութիւն արէք անտուն, անճար, աչքի լոյսից, ոտից, ձեռից զրկուած աղքատին»։ Զրոյցն այնքան լաւ է և այնքան կենդանի, որ ես մտադիր էի նրա համար մի առանձին յօդուածով խօսել, բայց հանգամանքն այնպէս բերաւ որ Ջուն-Ջաքէի բովանդակութիւնն այսօր այստեղ առաջ բերի, որպէս զի ընթերցողը տեսնի թէ գրականութեան մէջ ինչ տեսակ մուրացկաններ են լինում և ինչ տեսակ «խնամակալներ»։

Վերցրէք և համեմատեցէք պ. Բաշինջաղեանի «Մուրացկանների» հերոսին և նրա աղաչանքները, «Մշակ» լրագրի № 145-ի մէջ տպագրած մի... րէկլամի հետ, որով նա իր «հզօր» հովանաւորութեան տակ է առնում կաթուածահար «Աղբիւրի» և «Տարազի» խմբագրութիւնը։ Ահա այդ նշանաւոր րէկլամն ամբողջապէս, որ «Մշակի» խայտառակութեան «chef-d'eauvre»-ը պիտի համարուի.

‹Տարածելով ‹Մշակի› անցեալ և այս համարի հետ ‹Աղբիւր› ամսագրի և ‹Տարազ› շաբաթաթերթի յայտարարութիւնը, մենք պարտք ենք համարում մի քանի խօսք ասել այդ երկու հրատարակութիւնների առիթով։ Թէ ‹Տարազը› և թէ ‹Աղբիւրը› ներկայ 1894 թւին, ինչպէս մեզ հաղորդում են, այնքան քիչ բաժանորդներ ունեն, որ եթէ գալ 1895 թւին էլ այդպէս շարունակվի, նրանք չեն կարող գոյութիւն ունենալ։ Իսկ այդ երկու հրատարակութիւնների գոյութիւնը շատ ցանկալի է, քանի որ մեր գրականութեան մէջ թէ մի մանկական ամսագրի և թէ մի պատկերազարդ շաբաթաթերթի գոյութիւնը աւելի քան անհրաժեշտ է։ Պէտք է խոստովանել, մանաւանդ որ այդ երկու թերթերի խմբագիր Տիգրան Նազարեան մի շատ անշահ փորձեր արեց գրական գործին մի տեսակ առևտրական գոյն տալու,—բայց մենք յոյս ունենք, որ անցեալ փորձից խրատված, ապագայում այդպիսի փորձեր այլ ևս չի անի։ Սակայն դրա հետ միասին պէտք է խոստովանել, որ թէ «Աղբիւրը» և թէ ‹Տարազը› մեր գրականութեան մէջ ամենալաւ ուղղութեան հաւատարիմ են եղել, գրականութիւնը փողոց չեն դարձրել և չեն դիմել այն շանտաժային միջոցներին, որոնց դիմում են մեր լրագրութեան մի քանի օրգանները։ Ահա այդ պատճառով մենք անկեղծօրէն ցանկանում ենք, որ հայոց հասարակութիւնը միջոց տայ թէ ‹Աղբիւրին› և թէ ‹Տարազին› պահպանելու իրանց գոյութիւնը։ Հասարակութեան համակրութիւնը մի և նոյն ժամանակ բարոյական պարտք կը դնի այդ հանդէսների խմբագրութեան վրայ՝ երբէք չշեղվել գրականութեան ազնիւ ճանապարհից›։

Այդպէս ուրեմն «Մշակը» վկայում է որ «Տիգրան Նազարեան մի շատ անշահ փորձեր արեց գրական գործին մի տեսակ առևտրական գոյն տալ», բայց միևնոյն ժամանակ պարտք է համարում (!!) խոստանալ որ «այդպիսի փորձեր այլ ևս չեն կրկնուի»։ Այդ խայտառակ տողերից յետոյ դեռ համարձակութիւն է ունենում հաղորդել հայ ազգին թէ «Աղբիւր» և «Տարազը» մեր գրականութեան մէջ ամենալաւ ուղղութեան հաւատարիմ են եղել, գրականութիւնը փողոց չեն դարձրել և չեն դիմել այն շանտաժային միջոցներին, որոնց դիմում են մեր լրագրութեան մի քանի օրգանները»։

Մէթէ հայը երբէք չպիտի հասկանայ, թէ ինչ է նշանակում ազնւութիւն, պատիւ ու ամօթ։

*** Բագուի «Կասպի» լրագիրը՝ «Հայ բուտներ են» վերնագրով մի նկատողութիւն է գրել, որի մէջ զրուատելով հայ հարուստների եռանդը որ գնել են պ. Բաշինջաղեանի նկարները, մեծ գովասանքով է խօսում եղբայր Բուդաղեանների մի քայլի վրայ, որ նրանք դեռ չեն արել, այլ մտադիր են անելու։

‹Եղբ. Բուդաղեանները յայտնել են քաղաքագլխին թէ մտադիր են այնպիսի մի գումար նուիրել, որ կարելի լինի Բագուի Միքայէլեան հիւանդանոցին կից կանանց ծննդարանի բաժին բանալ և նոյն տեղը ‹Բուդաղեան ձրի ընթերցարան›։ Այդ բարի գործն իրականացնելու համար այժմ նախահաշիւ է շինվում և պահանջուած գումարը հաշվում է 45 հազար րուբլի›։

Կասկած չկայ որ ամեն մի բարեբարութիւն բարերարութիւն է և ուրախալի է տեսնել որ երբ, Բուդաղեանները իրենց քաղաքի համար չեն խնայում խոշոր գումարներ նըւիրել. բայց «Կասպի» լրագիրը հարկաւոր է համարում այդ դէպքի առիթով պատմական հետազօտութիւններ և համեմատութիւններ անել.

‹Բագուի հարուստներն, ասում է լրագիրը—հին ժամանակներից սկսած նոյնպէս նուիրաբերութիւններ էին անում, բայց դրեթէ բացառապէս էջմիածնին և եկեղեցիներին, իսկ մոռանում էին այն քաղաքը, որի մէջ հարստացել են›։

Երևի «Կասպին» Բագուի Մարդասիրական ընկերութիւնը, հիւանդանոցը՝ չէ նկատում Բագուի համար բարերար հիմնարկութիւններ։ Բայց այդ չէ գլխաւորը։ Ի զուր է լրագիրը վրդովվում՝ կարծելով որ հայ հարուստները միայն էջմիածնին և եկեղեցիներին են դրամներ նուիրում։ Հայ հանգուցեալ սատիրիկ Պարոնեանը անմահացրել է մի հայի անունն, որ «մզկիթ մը շիներ է»։ Կարծում ենք որ Բագւում ևս հաշուագիտ չլինին այդպիսի բարերարներ։

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԱՂԷՇ, նոյեմբ. 29։

(Թղթակցութիւն ‹Արձագանքի›)

Անցեալ օրեր մի շատ սրտաճմլիկ լուր տարածուեցաւ քաղաքիս մէջ և ամենուն սրտեր անմիջապէս ի սուգ համակեց։ Բայց թէ որտեղէն բղխեցաւ այդ սգագեաց լուր՝ ոչ ոք չկարողացաւ իմանալ։ Լուրը կայծակի արագութեամբ բօթուեց թէ՝ շատ ծանր հիւանդ է Մշու և Ս. Կարապետի նախկին Գեր. առաջնորդ-վանահայր Ներսէս Ծ. վարդապետ Խարախանեան։ Ժողովուրդի մէջ տիրեց մի սարսափելի իրարանցում, նոյն իսկ լալ ու կական և այդպէս համախմբեալ խմբերով շուտով առաջացան նոքա դէպի այն վանքը, ուր բանտարգելուած էր նա։ Ի մեծ ուրախութիւն եղաւ բոլորեցունց, երբ հօտին սիրեցեալ հայր Ներսէսը արդէն մի քանի րոպէից յետոյ թէև խանդարուած առողջութեամբ և նըւաղ դէմքով կանգնած տեսան պատուհանի առաջ, որ սէր, մխիթարութիւն և համբերութիւն կը կարդար իւր վշտացեալ հօտին։

«Առանց դառնութեան՝ չկայ ուրախութիւն, առանց խաչի՝ չկայ կենդանի կեանք,» ահա թէ ինչ կաւետարանէր մօտ երեք տարուայ անվեհեր և արի բանտարկեալ հովիւը...«Ես, աւելացրեց նա, ձեր՝ իմ սիրեցեալ հօտիս, ներկայ ողբալի դրութեամբ աւելի կը տառապիմ, քան իմովս։

«Առանց ձեզ՝ չկայ մեր գոյութիւն, և ահա մեր գոյութեան այդ խարսխի անվտանգութեան համար կը մտածեմ զօրն ի բուն։

«Այս չարչարանք՝ մեր պարտքն է, բայց այս չարչարանքը աւելի այն ժամանակ տանելի կը դառնայ, երբ ժողովուրդը իւր անկեղծ կարեկցութեան արցունքներով ջրէ ու զովացնէ նորա տառապեալ հոգին...

«Չմտածէք երբէք որ ես կը նեղանամ ձեր սառնասրտութեան ու անտարբերութեան համար. քաւ, երբէք՝ զի ինձ ծանօթ են աւելի այժմս այն բոլոր հանգամանքներ, որի տակ ճմլուած ու ճզմուած էք դուք և որի դառնութեան ու ծանրութեանը այնքան վերահասու չէի, որքան եմ այժմս։

«Ինձ համար՝ նախքան բանտարկութիւնս՝ թեթև խաղալիքներ կը նկատուէին բանտն ու նորա տանջանաց գործիքներ, երբ կը լսէի թէ այս ինչ անձ այդ վիճակին է մատնուած։

«Եթէ երբէք զգայի անգամ նորա ծանրութիւն, այդ ալ բոլէական կարող էր համարուիլ։ Իսկ այժմ... այժմ մեր աշխարհին, կամ թէ աւելի յարմարագոյնն ասել՝ մեր հայերուս վիճակեալ ու նախաւանդեալ բաղդը (այդպէս անուանենք այժմ) սեպհական կաշուս վրայ փորձեցի, հետևապէս այդ վիճակի մէջ, մեղայ Տեառն, ամենագէտ դարձայ։

«Ուրեմն բսել կուզեմ, նախկին պատրիարքի օրով (Աշգեան) երբ բերուեցայ աստ, նախաօրերին իսկ քանիցս անգամ թէ հեռագրով և թէ գրութեամբ դիմեցի նորան խնդրելով, եթէ դժուար է իմ ազատութիւնս փութացնել, գէթ հաճի հայրական գթով իմ գործն և ինձ այնտեղ, ի Պօլիս փոխադրել, ուր, կը հաւատայի ես, արդարութիւն և ճշմարտութիւնը այնքան երկար չպիտի ոտնակոխ լինէր և այնքան չարեաց ալ տեղիք չպիտի տրուէր։ Նա, դուցէ այս վիճակին անծանօթ լինելով, անկարեկեց գըտնուեցաւ դէպի ինձ, զի դուցէ ունենալու համար հարկաւոր է և այս վիճակը։ Ահա, իմ անմխիթար և սիրեցեալ որդիքս, որտեղէն կարող եմ վշտանալ և սրտաբեկուիլ, օրինակուիլ ու կարեկից սիրտ ունենալ։ Աւելացրէք և իմ թախանձքներիս դիմաց և նորա վերին ատեանի անտարբերութիւն և անփութութիւն՝ գոնէ առ. օծեալ կարգն և վարդապետական պաշտօն։

«Գնացէք և հանգստացէք, կաղաչեմ, զի ձեր որբական և անտիրունջական ներկայութիւնը առաւել ևս կը նորոգէ այն խոցեր, որոց ցաւ ու մռմռուքի տակ հանապազ կը տանջուի հոգիս ու միտքս»։

Վշտահար ժողովուրդ ցրուեցաւ միայն այն րոպէին, երբ արդէն պատուհանի առջևէն իւր բնակարանն էր քաշուի իւր սիրեցեալ և անմխիթար հովիւը։

Բացի Ներսէս հայր սուրբէն հին՝ որպէս քաղաքական յանցաւոր՝ յայտնի բանտարկեալներէն դեռ ևս անորոշ վիճակով կը գտնուին բանտի անտանելի կապանքների ներքոյ Միաց. ընկերութեան նախկին ուսուցիչներէն Կ. Պոլսեցի Մոդեան Էֆէնտին, Կարնեցի դերձակ Աղաբէգ և Մարտիրոս. Մշու բնիկ քաղաքացի պատուաւոր վաճառականներէն Մինասեան Խաչիկ աղան, Գոմեր գիւղացի ծերունի Ղուկաս վարժապետ, երեք Վարդենացի, Աւզուտ գիւղացի տիրացու Ցալոբ և ուրիշ տասնեակ հայ անձինք։ Իսկ Ղզլղաճ գիւղացի ծերունի Տէր Մամբրէ քահանան, որ իւր փախստական նկատուած Սրմենակ որդու համար ձերբակալուած էր Մուշ և բերուած քաղաքս, դարձեալ մօտ երեք ամսուայ բանտարկութենէն յետոյ՝ մահամերձ վիճակով, շղթայակապ հետիոտն և ոստիկաններով տարուեցաւ Մուշ, և այնտեղէն ևս, ինչպէս հաստատ աղբիւրէ մը իմացուեց, ի Կինձ։ Երբէք կասկածելու չէ որ ծերունի Մամբրէ քահանան, որ 70 տարեկան հասակէն աւելի բարձր է, այսքան կրած տանջանքներէն ու չարչարանքներէն յետոյ կարող է ցարդ ողջմնացած լինել։

Աւելացնենք և սոցա վերայ նաև Համբարձում Բոյաճեանի (Մուրադ) և իւր հինգ ընկերների բանտարկութեամբ աւելանումը ևս, այն ժամանակ արդէն թիւը, թրքական վարչութեան քմաց համաձայն, դուցէ հազիւ լրացած լինի, նոյնպէս Աւետիս էֆէնտու և նրա ուխտ առաջատուր անձանց կալանաւորումը։

Ի դէպ. մի շաբաթէն աւելի է որ վերջիններիս ազատութեան համար

ՖԵԼԻԵՏՕՆ

ՄՈՒՇ-ՏԱՐՕՆ*)

(Թուցիկ տեղագրական)

Նուէր վան. Գր. Ալ. և միւս տարագիր Թանկագին հայրենակիցներիս։

Մեր աշխարհն է սուրբ,—Մեր հողուն վրայ
Աստուած է քայեր, հանելով զԱդամ.
Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ Ինք.
Աշխարհք, հայ ապրինք։

Նար-Պէյ։

Ջհաշուած մի քանի լեռնաստորոտ գիւղօրայք, օրինակ Ղզլաղաճ, Կառնեն, Քարձոր, Զրիկ, Բերդակ, Առուառինչ, Տերկևանք, Ջափնա, Մոկունք, և այլ երկու-երեք գիւղերը, որոնք խաշնարածութեամբ և երկրագործութեամբ հանդերձ կը պարապին նաև թութունի մշակութեամբ, բրտութեամբ, ջուլհակութեամբ (ոստայնանկ), բանջարաբուծութեամբ և այլ մասնաւոր մեծ ու թեթև կողմնակի արհեստներով ու աշխատութեամբ՝ ընդհանրապէս վեր առած միւս գիւղօրայքի ազգաբնակութիւնը կը զբաղի հին, շատ հին նահապետական սովորութեամբ ու ձևի երկրագործութեամբ, խաշնարածութեանբ և անասնաբուծութեամբ։

Թութուն, որ կը մշակեն վերոգրեալ այդ մի քանի գիւղերը, և այն ևս ի հարկէ նահապետական ձևով, առաջին կարգի և ամենաընտիր տեսակ կարող է համարուել օտար երկրեայ ծխախոտի հետ համեմատութեամբ. նա, ինչպէս կը վկայեն անգամ եւրոպացի ուղևորներ, հետախոյզ ճանապարհորդներ, ամենայն վստահութեամբ և բարձր ի գլուխ կարող է մրցի եւրոպականի հետ։ Նա ընտիր է առ հասարակ իւր զօրութեամբ՝ որ ծխող մը գինովութեան աստիճանին կը հասցնէ. նա ընտիր է իւր այն յատկութեամբ, որ ծխող մը, կարելի է ասել, գերծ կը մնայ միւս թութուններէն գոյացած հազէն, գռեխ բղլաժէն և այլ սոցա նման հիւանդութիւններէն, որոց աւելի ուժ ու աճում կուտան միւսները։ Այս՝ ի մէջի այլոց, դարձեալ այն եւրոպացիների խոստովանութիւնն է, որոնք պատահաբար թէ գործով հանդիպեր են Մուշ, իսկ վերադարձին՝ չնայած ճանապարհների անհունս երկարութեան ու դժուարութեանց՝ նոյնպէս տեղի ունեցած կրկնակի ծախսի և արժէքի գնահատութեան, այնու ամենայնիւ դարձեալ մեծ գոհունակութիւն կը համարեն իրանց ստանալու ամեն տարի Մշեցի բարեկամներէն իրանց թախանձանօք պատուիրած ու խնդրած թութուն։ Որին արդեօք անծանօթ չէ Մշու թութունի գրաւիչ անունը, ով չի ցանկայ արդեօք ունենալ Մշու թութուն։ Դիմենք ի սփիւռս աշխարհի տարագրեալ մի Մշեցու և պիտի տեսնենք որ նա ուրպիսի կարօտով և անվերջ թառաչներով կը յիշէ իւր սիրելի թութնին, որի թուխպ ծուխ երբեմնապէս միայն կարող է տեղն ու տեղ խեղդել ու ցրուել իւր այն վիշտն ու կսկիծը, որ դարերով գոյացեր, եկեր ու տիրեր է իւր սրտին ու մտքին և վերջապէս ամբողջ հոգեկան աշխարհն ու նորա արտաքին պատեանին...Իսկ թութնի, այդ ընտիր ու արդիւնաբեր թփի անչափս արդիւնքը այսօր հանգիստ ու փառաւորապէս կը վայելէ դարձեալ եւրոպացին։ Նա արդէն քանի տարիէն ի վեր րէժիի ապրանք է դարձած։ Եւ այսօր շնորհիւ տիրող տէրութեան ապաշնորհութեան ու կենդանի դիակ լինելուն, թութուն մշակողն անգամ անկարող է մի գլանիկ իւր քրտնաթոր մշակած թուփից արձակ համարձակ ծխել, առանց մեծ-մեծ տուգանքների ու պատիժների ենթարկուելու, այնքան խիստ միջոցների ու հսկողութիւնների տակ է առած րէժիի վարչութիւնը իւր իշխանութեան յանձնուած այդ արդիւնաբերութիւնը։

Բրտութիւնը նոյնպէս, եթէ ոչ դըրական ու գիտնական ազդեցութեամբ, գոնէ բնական հանճարով և անխոնջ հետևողութեամբ ըստ բաւականին կոկուած, յղկուած ու դուրականուած է։ Բրտութեան արդիւնքներն են՝ կարաս, ուր կը բնուի Մշեցու անչափս սիրելի և մշտագործածական բլոււռ. կարսի ձագ, որ կը ծառայեցնեն զանազան բռնուածքների. ջռայ, ուր կը լեցնեն ու կը թըթուացնեն թութն ու բանջարը, քալամն (կաղամբ) ու մրգաթթուն, մեծ ջռայ, որ կը գործածեն որպէս շտեմարան, ուր կը լեցնեն նաև նեգտար-գինին, Մշու այդ անպակ բաժակ, որոց մէջ դարձեալ կը պահեն ու կը պատրաստեն մածուն ու թան, կաթ ու կարագ և ուրիշ տասնեակ մթերքներ. պուդուկ, ծափկիկ, որ կը գործածեն կերակուրներ եփելուն. եղուղայ՝ իւղ հալեցնելուն և եփեցնելուն. քթոց ու տոտիկ՝ կաթ կթելուն. կուժ, բդիկ, կժ փառջ, բոգկուլ-փարջ, բղբղիկ և ուրիշ մի քանի մանրիկ ջրամաններ. սափա, ուսկուրա՝ որպէս ջրխմիչներ, լանկարի, հողէ թասա, մաթրադ-քասա, քասյա, գոտիկ և դարձեալ մի քանի այլ մանր ու պէտ կերակրամաններ, այնպէս ևս ջրագ թունիր՝ հաց թխելու և կերակուր եփելուն, փեթակ՝ շտեմարանների համար, հողէ թարաք՝ ամեղէն դարսելուն, ակնունք՝ ջրային և օդային խողովակների համար. կղմինդ՝ շինութիւնների և այլն և այլն շինականի մը տան համար եղած արդ ու զարդի պէտքանելիքների համար եղած հողեղէն իրեր։ Եւ այդ բոլորի համար մշեցին ունի ընտիր հող, կաւ և կաղջին, որ պատրաստելէն յետոյ երկաթի և պղնձի գիւ ձացկանութիւն կունենայ։

Բացի այս հողեղէն աման չամանէն նոքա ունին նաև և պղնձեղէն ամանեղէններ՝ պղինձ, թասա, լանկարի, ուսկուրա, և ուրիշ սոցա նման գործածելիք իրեր։ Թող դոցա՝ Մշեցին ունի նաև ծծմբի և վառօդի բօրակներ ևս, և այդ հանքը եթէ կարելի է այսպէս անուանել, կը գտնուի Ցրօնք բազմահայաբնակ մեծ գիւղի ուղղակի բնակարանների և շինութիւնների մէջ։ Ցրօնցին, ինչպէս նաև Մշեցոց մեծագոյն մասը, գիտեն գոհացուցիչ հմտութեամբ օգտուիլ նորանէ՝ պատրաստելով ամենաընտիր վառօդ։ Գիւղերէն քանիսներ ունին նաև հանքային ջրեր, որ նոցա բարբառով կը կոչուեն ‹ջերմուկներ›, ուր, առհասարակ ուխտ կը գնան հիւանդներ, քամոտներ, և այլ ցաւագարներ ու կը գտնեն հրաշապէս բժշկութիւն։ Այդ ջերմուկներէն յայտնի են Զէյլա-Իւսուփի (գիւղ) ջերմուկ, Սերկուայ, Աղջնայ, Կրեսորա ջերմուկներ, Ծծմակայ և այլ քանի տեղերին։

Երկրագործութիւնը, ինչպէս ասինք քիչ վերև, բոլորովին նահապետական է։ Նոցա գութանը անպատճառ պէտք է լծուած լինի տասներկու լուծ գոմէշ ու եզներով, արօր՝ չորս, ցաք՝ չորս, սայլ՝ չորս, դայլուկ՝ չորս, իսկ կամեյն ու կասելը բոլորովին ջոկ, այսպէս ալ կոռին ու քաշան, մանգեղն ու ցաքլից։ Մինչդեռ միևնոյն այդ գործեր կարող են կատարուել նոցա կիսաանասուններով։

Ժողովուրդը իւր այդ իւրաքանչիւր պարապմունքների համար ու համաձայն ունի կերպ կերպ երգեր, խաղեր ու հէքեր։ Օրինակ գարնան անուշաբոյր եղանակին թէ աշնան տերևաթափ, յոգնած ու դեղնած միջոցին, երբ նա, գեղջուկ երկրագործը, իւր գութանով ու արօրով միասին կը դիմէ դէպի իւր կենսալի դաշտն ու դուրան, արտն ու անդաստանը, առաջի գործն ու ակօսը բանալու միջոցին կը լսուի անմիջապէս բացի իւր ցանքի, առատ արդիւնաբերութեան, պտղաբերութեան և անվնասութեան համար առ Նախախնամողն ուղղած ջերմեռանդ աղօթքն ու պաղատանքն, օրհնենքի ու գոհացողութեան սրտառուչ մեղեդին, նաև նորա ուրախ ու զուարթ գործի շէրի գիգլոցը, որ կը բաւականանք միայն նորա երկու տան յառաջաբերութեամբ։ Ահա նորա նմուշ.

Գութան գութան՝ Աստուածաբան,
Առաւ յէջաւ վըր գետափան,
Ջուտ մկրտեց զկորդն ու զխոզն,
Զօրմն ու զբաղեղ արաւ սէգհան։
Չոքն ի գետին, կուղն ի սամին,
Խէքն ու բարին մըր մաճկվորին,
Ազապ աղջիկ՝ ուժ տնվորին,
Կարմիր խնձոր՝ ամլվորին։
Սև պոլոզներ (վեզար) վարդպետներին,
Սա-կողոպուտ տէրտրներին,
Մեղք ու վարձեր րէչյներին.
Սոխուսխտոր (մածուն) գզիրներին,
Արիւն-գռեխ հըրամ (կաշառք, ձեռնածու) կերին,
Չկանչողին, չլսողին, երես սևին,
Հառովէլ, ջան հոռովէլ.
Աստուած պահէ զմըր տանուտէր (այս ինչ անուն),
Անէ զհողին բեբալխդներին,
Ուրթ ու օջախ չար-գրողին... և այլն և այլն։

Այսպէս ևս ունի գամնելը, կալ կասելն իւր երգն. Ահա մէկ ալ տեսնես գամն ու կոռին կառավարող երեխան թիթեռի անհոգ և թեթև ու անդադար շարժումներով՝ բացի իրան յանձնուած գործը կառավարելէն՝ օգուտ քաղած իւր հարևան գամնակաս երեխայի անտարբերութիւնից, ծուլութիւնից, անմիջապէս մի առանձին ոգևորութեամբ մտրակելով իւր սիրունիկ եզնուկ-աջառներին կ'երգէ հպարտօրէն.

Արաբ, արաբ՝ վիր գամ պարապ,
Տէրն էր մեռի՝ հողին չէլի,
Ոտքեր կեռի՝ ձեռքեր քաշուի,
Աչքեր փչի՝ գլուխ ծռի,
Լան ճրագու՝ օճու լեղի։
Սև-հողեր՝ սպիտակ-հողեր,
Էշն է փչցի՝ գարու կողեր,
Ջանդակ հոտի՝ աչքեր օրդնի,
Միս Հըլըզի՝ ոսկոր հալի,
Պարապ մարդիկ՝ գացեր կրծեր,
Սատկած իշու՝ գարդակ կողեր,
Հալա, ջան հալա,
Գամն ու կոռիս իմալա,
Հայ հալա, հայ բրա... և այլն և այլն։

Նոյնպէս նահապետական ձևով կերնուի ու կը մաղուի նորա ամբողջ հացաբոյսերը. Շատ անգամ եթէ թեղերի (չար-

*) Տես ‹Արձագանք› № 145.

յուրեր կը պտտին շարունակ, սակայն դժբաղդաբար ցարդ իրականութիւն մը ստացած չէ. գուցէ նորա համար որ ոսկիներն գնգնգոցը դեռ չէ կարողացած խլացնել վարչական մարմնոց լսելիքներ... ոսկի... ինչե՜ր չես կարող անել...

Անցեալ օրեր Տափավանքցիք ու Ջրհօրցիք, որ կը բնակին Գրգուռ լեռան թևերի ստորոտ և կը կազմեն Ախլաթու սահման՝ Մուշ-Զխուրա և Բաղէշու վերաբերմամբ, թափօներ լցուեր էին քաղաք և կը բողոքէին մի կարգ հանրածանօթ աւազակների հանապազօրեայ արարմանց դէմ, որոնք, ինչպէս կը պատմէին նոքա, արդէն ոչնչից ոչինչ չեն թողած և չեն թողու անգամ սյսուհետև նոցա ունեցածէն:

Ցորեանի ու խոտի բարդոցներ դաշտ, արտի մէջ կը կրակեն. տաւար ու ոչխար ուզած տեղերէն և ուզած ժամանակ կաւազակեն ու կը յափշտակեն, ընդդիմացողը անտարակոյս կըստանայ կէս փարանոց շիկացած գնդակ մը. աղջիկ և կին փախցնել և թուրքացնել արդէն դարձեր է իւրաքանչիւր մուսուլմանի սեպուհ պարտքն ու նուիրական գործը... և այլն սոցա նման մի կարգ սրտակսկիծ տեղեկութիւններ:

Վերջ ի վերջոյ, ինչպէս տեղեկացայ, նոքա յուսահատելով և գուցէ կասկածելով Վալի փաշայի խոժոռ և խորթ նայուածքէն, թողեր քաշուեր էին իրանց գիւղեր: Փրխուսցիք ու Կծուանցիք ևս, որոնք իրանց անասնոց յափշտակութեան համար մտադրած էին եղեր գալ քաղաք և բողոք բառնալ աւազակաբարոյ քիւրդերի դէմ, յետ են քաշուած իրանց այդ օրինաւոր մտքէն, այն ժամանակ միայն երբ վերահասու էին եղած Ջրհորցոց ու Տափավանքցոց բողոքաց ապարդիւն հետևանքին:

Չգիտեմ միւսներ, սակայն այս լաւ գիտեմ՝ տարի չկայ որ Տափավանքը քիւրդ աւազակներէն չկողոպտուի ու չթալանուի և մարդիկ անգամ չվնասուին:

Բուլղէցի:

Կ. Պոլսի լրագրներից քաղում ենք հետևեալ տեղեկութիւնները:

ՀԱՄԻՏԻԷ ՀԵԾԵԼԱԶՕՐՔ. Վէհզիլ փաշա որ անցեալները մեկնեցաւ Պոլսէն և հետը կը տանի Վեհ. Սուլթանին կողմէ Իմթիազի պատուանշան մը չորրորդ զօրաբանակին հրամանատար Զէքի փաշային համար և Համիտիէ հեծելազօրքի գունդերուն բաշխուելիք դրօշակներ, երբ Տրապիզոն հասեր է, ընդունուեր է մեծ հանդէսով կուսակալին և զինուորական հրամանատարին ու բոլոր պաշտօնատարներուն կողմէ:

Հազարապետ Րաղի էֆէնտի այդ դրօշակներէն մին պարզած ձեռք կը բռնէր ընթանալով բոլոր քաղաքին երևելիներուն հետ, որոնք Վէհզիլ փաշան մեծ յարգանքով առաջնորդեր են մինչև Կիւղել-Հիսարի զօրանոցը:

ԱՐԱԲԿԻՐԻ և ԱԿՆԱՅ մէջ ծաղիկ ու հարսանիթը սաստկութեամբ ճարակած են և մեծ կոտորած կընեն: Պէտք եղած թուով բժշկի պակասութիւնը մեծապէս զգալի կ'ըլլայ:

ԷՐԶՐՈՒՄ. Կուսակալ հազգը փաշա զօրահանդէս մը կատարեր է այս վերջերս Էրզրումի մէջ, ուր կը տեսնուէին Էրզրումի և շրջականներու բոլոր զինուորական բարձր պաշտօնատարները, թէ ձիաւոր, թէ թընդանօթաձիգ և թէ հետևակ:

— ԷՐԶՐՈՒՄԻ Թօրթում գաւառակին կերդրօն Հինախ գասապային մէջ զօրաւոր շարժ մը պատահեր է:

Էրզրումի շրջակայ լեռները սեպտեմբերէն ի վեր ձիւնապատ են, և քաղաքին մէջ ալ անցեալ շաբաթ ձիւն սկսեր է տեղալ:

ՎԱՆ. Վերջերս Զանտըրը և Վասթան երկրաշարժ տեղի ունեցեր է: Մարդասպան Ապտի չարագործը ինքզինքը յանձներ է: Մահմուտիէի մէջտեղէն անցնող առուակին վրայ նետուած կամուրջին շինութիւնը աւարտեր է:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. Քօլերան մեզի ալ այցելեց վերջապէս անցեալ շաբաթ օր հոկտեմբերի 29-ին: Նոյն օրը երևան եկաւ քաղաքիս արևմտեան հարաւային կողմը անմաքուր թաղէ մը: Ժողովուրդը, որ համաճարակի մասին մեծ արհաւիրքով նախապաշարուած կը մնար՝ շրջակայ և հեռակայ վայրերու մէջ գործած մեծ աւերներուն ի լուր, երկիւղով և սարսափով համակուած՝ ընդհուպ մեծ զգուշութեամբ սկսաւ հետևիլ բժիշկներուն տուած առողջապահիկ հրահանգներուն և անոնց գործադրութեանը կէտ առ կէտ հսկել թէ իր անձին նկատմամբ և թէ տանը մէջ: Եւ ահա այս պատճառաւ յաջորդ օրը հականեխական կարգ մը նիւթեր ամենաբարձր գին մը ստացան դեղարաններու մէջ կամ հրապարակին վրայ: Ախտ-ֆէնիքի քիլոն 25 ղրուշէն մինչև 150 ղրուշի բարձրացաւ և քոնեաքի տուղինան 60 էն 130 ի հասաւ:

Կառավարութեան հրամանով փակուեցան քաղաքիս իսլամ և ոչ-իսլամ բոլոր վարժարանները:

Առ այժմ համաճարակին հարուածները այնքան սաստկալի չեն երևիր: Համեմատական հաշուով մը, ծագում առած օրէն (հոկտ. 29 էն) մինչև այսօր (նոյեմբ. 9) հազիւ 75 հոգի մեռած են քոլերայէն, և այս թիւը պէտք չէ հաւասար համեմատութեամբ առնել. գիտնալու է թէ առջի օրերը աւելի ծանր եղան քան վերջի օրերը: ինչպէս երէկ 3 զոհ միայն ունեցանք:

Քաղաքիս հետ հաղորդակցութիւն կը դժուարանայ: Մին 9 ժամ հեռաւորութեամբ դէպ արևմտահարաւ և միւսը 5 ժամ դէպ արևմտահիւսիս երկու տեղեր մաքրանոցի նոր կայարաններ հաստատուած են, որոնց մէջ ասկից մեկնող որևէ ուղևոր պարտաւոր է 10 օր քարանթինայ բռնել և ապա անցնիլ երթալ:

ՄԻ ՄԵԾ ՀՐԴԵՀ ԿԻԼԻԿԻՈՅՈՒՄ

Հաճընից «Արևելքին» ուղղած մի թղթակցութեան մէջ կարդում ենք հետևեալը.

«Երբ ամէն մարդ այգեկութէն վերադարձած և ձմրան պաշարը ամբարած՝ այլ ևս կը պատրաստուէր վերջին հրաժեշտը տալու իր սիրելի ընտանեաց, և գաղթել մօտաւոր գաւառներ, ինչպէս Ատանա և այլուր, անմիջապէս վրայ հասաւ սոսկալի արկած մը, որուն նմանը քիչ անգամ տեսնելու դժբաղդութիւնը ունեցած են Հաճնցիք. կէս գիշերին՝ ճիշդ ժամը 6-ին ատեններ տեղույս Տ. Սիմէոն քահանայի տունէն կրակ ելնելով մինչև առաւօտ այրեց լափեց մօտ 800 տուն. անհնարին եղան առաջքն առնելու համար ի գործ դրուած ամէն ջանքերը, զի սաստկաշունչ հով մը փչելով վաղընդփոյթ ամէն կողմ տարածեցաւ բոցը, և գիշեր լինելուն պատճառաւ ոչ ոք կարողացաւ տան մէջ գտնուած կահ կարասիքը և ձմրան համար ամբարած պաշարը ազատել. հազիւ հազ կրցան իրենց անկողինը ազատել: Արշալոյսին խեղճ ժողովուրդը՝ խոնջեալ և պարտասեալ՝ աւերակաց ներքևէն բարձրացող ծուխին ու մուխին հետ ողբագին ձայնիւ դէպի երկինք օգնութիւն կը հայցէր: Մայրերն իրենց կաթնկեր մանուկը գիրկը առած աստ անդ կը թափառէին, փողոցները երկսեռ բազմութեամբ խճողուած էր, լալագին և աղիողորմ ձայներ օդը կը թնդացնէին. սիրտ պէտք է որ դիմանայ այսպիսի պարագաներու մէջ, զի եղան մարդիկ որ այն օրը և յաջորդ օրն ալ նօթի ծարաւ անցուցին փողոցներուն անկիւնը: Եւ հիմայ ձմեռն ևս վրայ հասնելով, արեգակն ալ կը զլանայ իւր կիզիչ ճառագայթները տնանկին՝ որ բացը նստած տաքնալ կուզէ, առ ի չգոյէ անխույ և փայտի: Այս արկածին հետևանքն այն եղաւ որ ցորենին չինիկը բարձրացաւ 7-8 ղրշ. մինչդեռ, առաջները 3-4 ղուրղուշի գնել կը տրտնջայինք. ընտանիքներ կան որ 20 օրէ ի վեր հացի երես չեն տեսած, միմիայն ապուրով մը և կամ իրենց նօթութիւնը անցնելու չափ չոր ու ցամաք փլլաւով երեկոյ կընեն:

Կը յուսանք թէ Ազգ. Պատրիարքարան, նկատողութեան առնելով հրկիզելոց այս ողորմելի կացութիւնը, կարելի եղածը պիտի ընէ անոնց օգնութիւն հասցնելու համար:

ԱՊԱՀՈՒՆԻՔ, 28 նոյեմբերի.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Բարբարոսական ոգին զրկեց մեզ կեանքէ, գոյքէ, պատուէ և նուիրական սրբութիւններէ, բայց լուռ ենք մնացեր և ինչո՞ւ:

Երբ քրդի արած աւազակութեան և անկարգութեան համար բողոքեր ենք գաւառի վարչութեան, լսելի չլինելէն զատ՝ վտանգաւոր հետևանքների ենք հանդիպեր՝ քրդին զայրութ պատճառելով, ուստի լուռ ենք եղեր:

Երբ գաւառի վարչութեան անկանոն վճիռների դէմ բողոքեր ենք վիճակի կառավարչապետ մութէսերֆին, աւելի ծանր և վնասաբեր հրամաններ ենք ստացեր. և երբ նորա դէմ բողոքեր ենք նահանգի ընդհանուր կուսակալին, ո՜հ, խիստ ծանր և անտանելի նեղութեանց, բանտի, մեծագումար կաշառի, աքսորի և այլ այսպիսի դժուար պատահարների ենք հանդիպեր, ուստի լուռ ենք եղեր:

Եւ եթէ այս բոլորի դէմ բողոքեր ենք բարձրագոյն իշխանութեան և մինչև իսկ օգոստափառ Սուլթանին՝ առաջուց դրուած պատժոյ կրկինն ենք ստացեր և Արաբիոյ խորշակահար անկիւններ գտել հանգիստ. ուրեմն ի՞նչ կը մնար մեզ անելու, եթէ ոչ լռել:

Եթէ երբեմն արտասահման եւրոպական ամենաողորմած պետութեանց խիստ դժուար միջոցներով աղերսական տեղեկագրերով յայտնել կրցեր ենք մեր անցուկ ու անտանելի դրութիւնը, շատեր անտես են մնացեր և խօսքի առարկայ եղածն ալ՝ սուտ է, զրպարտութիւն է պատասխանուելով մեր բարձրագոյն իշխանութեան կողմից երեսի վրայ մնացեր է, որով չենք կրցեր մեր աղիողորմ լաց ու կոծն ու աղեկէզ աղաչանաց արձագանք գտնել:

Մօտիկ ատեններս պատահած իրողութիւններէն քանիսը բացատրելով ընթերցող հասարակութեան, վստահ կը լինիմ թէ պարզապէս հասկանալի կը լինի մեր լուռ մնալու ախիթն և մենք որ և է մեղադրանքէ ազատ կը լինինք:

Անցեալ 1893 թուոյն Բաղշոյ յայտնի կեղեքիչ կուսակալը յանկարծակի հրամանաւ ձերբակալել տուեց տեղւոյս երևելիներէն Խաչ-Մանուկեան Կարապետ աղան. Սալի-բէկ պաշտօնազուրկ մուֆթին և Մեհմէդ էֆէնտիներ, զորոնք միայն 12 ժամ վաշտ մը զինեալ զինուորաց պահպանութեամբ կենդրոն բանտ պահելէն վերջ, դէպի Արաբիա աքսոր ղրկեց առանց որ և է պատճառի մը. այլ միայն այն առթիւ, որ կրցել կարողանար ժողովրդեան միս ու արիւն կազմող նիւթականը, պատկերացնելով նոցա մէջ վաղն իւր հրէշանման ստուերով: Դժբաղդ աքսորեալներ իրենց որոշեալ աքսորավայրեր հասնելէն զկնի սկսան անընդհատ բողոքներ տալ Բ. Դուռն և այնչափ կրկնեցին որ (գոնէ վասն աշխատ առնելոյ գլխ) բարեխնամ Սուլթանը միայն Սալի-բէկին իւր ներկայութեան բերելու հրատէն տուաւ: Խեղճն աբիւնահօս աչքերով, բողոքուած սրտով Նորին Մեծութեան ներկայանալով իր անմեղութիւն և իսլամութեան մատուցած անհուն ծառայութիւններ յիշելով՝ իւր ազատումը խնդրեց. բայց՝ ներկայ դարուս սոմ. քաղաքականութեան համաձայն չես կարող գործել պատասխանուելով՝ պատիժն աւելի ծանրացաւ, Արաբիայի աւելի խորերը աքսորուելով, ուր չկրնալով դիմանալ հեղձուցիչ օդին և սաստիկ ջերմութեան, կնքեց իւր մահկանացուն ընտանեաց կարօտով, հայրենեաց սիրով: Ասոր վախճանն այս, ապա ի՞նչ կը լինէր միւս երեքին, եթէ անոնք ալ Նորին Մեծութեան ներկայանալու բաղդն ունենային, կարող էք երևակայել:

Նոյն թուոյ նոյ. վերջին Մշոյ Ալզուտ անուն գիւղի մօտեր հարկահան ոստիկաններ աւազակների հանդիպելով կամեցեր են ձերբակալել և այս առթիւ ոստիկանաց և աւազակաց մէջ տեղի ունեցած ընդհարման միջոցին սպանուած է եղեր ոստիկանը մը. այս սպանութեան լուր անմիջական հաղորդմամբ Մուշէն և Բաղշէն կանոնաւոր զօրաց վաշտեր և ոստիկաններն նոյն գիւղն պաշարեցին, 4—5 օր գործեցին ինչ որ գազանական էր. կոյսերի և մանկամարդ կիններ լլկումը, բռնաբարութիւնը, երիտասարդաց կամրած շամփրներով այրումը, ծերերի տանջանքն ու գանակոծութիւնը, ճիշտն խոստովանելով չեմ կարող նկարագրել, բարբարոսութիւնը վերին կատարին հասած էր. այդ խուժանը իր գազանային կրքերն յագեցնելէն, գիւղըն ամբողջովին աւրելէն վերջ շըղթայակապ Բաղէշ տարին քանի չափ երիտասարդներ և բանտարկեցին կենդրոնական բանտ, տանջանքներով լի դժոխք:

Ջախջախուած ու վիրաւորուած բանտարկեալներ անհամբեր կըսպասէին կանչուելու .... դատարանի կողմից, յայտնելու իրենց կրած տանջանքները և ցուցնելու իրենց վէրքերը ու՝ ինչպէս ճշմարիտ անմեղներ ազատուելու, բայց իզուր. «դուք էք չարագործները, ձեր այդ ցոյց տուած վէրքերը հին են (ցոյց տալով բժիշկների վկայականներ, զորոնք կեղծ շինած էին). արժան էք ոչ միայն բանտի այլ կախաղանի», ոմանք 10 և ոմանք 15 տարի բանտի դատապարտուեցան. իսկ Վարդենոցի Մարգար Մանուկեանը որ վերջէն իւր տնէն բռնուելով բերուեցաւ Բաղէշ իբրև այդ չարութեան հեղինակ, կախաղան բարձրացաւ, բայց այնչափ անմեղ էր, որչափ անմեղ է նորածին մանուկ մը, ինչպէս կը վկայէն յիշեալի դրացի քիւրդերն անգամ:

Յիշեալ կուսակալ Թաճին փաշայի հրամանաւ 1893 փետրվար ամսոյն որ 275 սոմ. լիրայ կաշառք առաւ պուլանըղցիներէն և այնպիսի բարբարոսութիւններ գործեց, որոց ուղիղ ըսելով մահմետական կրօնամոլ շէյխն ու մոլան, հաճին և ֆեխիններ անգամ չկրնալով համբերել բողոքեցին հայերի հետ գործուած չարեաց դէմ, բայց այդ բողոքելու արդիւնքը ոչինչ չլինելէն զատ մեծամեծ վնասների ևս պատճառ եղաւ:

Ապահոնեցի:

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Այս անգամ կ'ուզեմ պաշտօնականութեան շրջաններէն դուրս չպտտիլ, զի

դից դեռ չյաժանուած գերեզմանանման կոլոններ) երկարութեան յարմարութեամբ չփչէ խապիկ ըսուած հովը կամ մի ուրիշ քամի, որով հնար լինի հորսելի կոչուած փայտեայ գործիքով հրնել, այսինքն հորսելու թաթամատներով եղած ցորենախառն յարդը բարձրացնել և կամարաձև ուղղութեամբ նետել օդի մէջ, կարող է մինչև անգամ այնպէս երեսի վրայ մնալ մինչև խոր աշուն: Եւ այդ ժամանակ արդէն վրայ կը հասնեն ջրալի օրեր և ահա նորա ամբողջ տարուայ յոյսն ու ապաւէնը, միակ պաշարն ու ուտեստը կը մնայ անձրևների տակ և կը տեղն ու տեղ կը ծլի ու կը փչանայ. իսկ հողմերից ու անպակաս աւազակների փոհմակներից կը հրձիգուին ու կը դողացուին և վերջապէս կը վնասուին ու կը պակասին: Բացի բնութեան այս վերագրած բայց տգիտութեան թանձրամած քօղով պլուլուած հանգամանքին, կայ մի այլ քանի և կարելի է ասել աւելի զօրաւոր՝ թէև արհեստական՝ միջոցներ, որոնք չեմ սխալի եթէ ասելու լինիմ, առաւել ևս վատ ու կորստաբեր վիճակի կենթարկեն նորա արիւն քրտինքով հազիւ ձեռք բերած ու վաստկած այդ միակ ամբողջ տարուայ վաստակը, որ նոյն է ասել պարէնը: Եւ դոքա՝ առ այժմ մէկ կողմ թողած՝ մերիկան ու միւս վաշխառու անհատներ, անտարակոյս տէրութեան կողմէն օրինակութեամբ կարգուած ու հաստատուած տուրք և տասնորդներ հաւաքող շահնա կամ մուլթեզիմ կոչուած մամուռ-պաշտօնեաներն են, որոնք պատրաստ են անգամ ամենաչնչին պատճառներով, որոց ունենալը շատ ալ դժուար չէ նոցա համար, օրերով ու ամիսներով յետաձգել նորա հացաբոյսերի չափումը, մինչև որ չստանան մտադրած տուգանքը՝ որ սքօղուած է կաշառքի վարագուրով.

Շահնան (տասանորդ հաւաքող), որի հետ անտարակոյս կը լինին ուրիշ երկու օգնականներ և մի գրագիր, կորոշուին և կուղարկուին տեղւոյն կառավարութեան կողմէն: Սոքա՝ չնայած որ բոլորովին ապօրինի և բռնի կերպով մինչև խոր աշուն, կալոցների վերջաւորութիւն, ձրիաբար կապրեն գեղջուկ ու աղքատ ժողովրդի հաշուով և իրանց հետ՝ դարձեալ ձրիապէս՝ կապրեցնեն իրանց ձիերին, էշերին և շատ անգամ ևս իւրաքանչիւր հանդիպակած իրանց ազգականներին և ծանօթ-բարեկամներին, այնու ամենայնիւ այդ ձրիակերութեամբ հանդերձ, այն քան վնասակար ու անտանելի չեն կարող համարուիլ, որքան մուլթեզիմ (կապալառու հարկահան, տասանորդ հաւաքող) մականուանուած մամուռ-պաշտօնեաներ:

Երբ կառավարութիւնը ամառուայ սկզբներին աճուրդի կը հանէ գիւղական ժողովրդի ցանքսի երեսը՝ անտարակոյս կրկնակի արժողութեամբ, այդ ժամանակ առ հասարակ այդ մարդապատկեր տզրուկ ցեցեր պատրաստ են ամենածանր գներով անգամ վերցնել կառավարութիւնից առաջադրեալ գիւղական ժողովրդի հողային այդ արդիւնաբերութեան երեսը. ուրովհետև նոքա իրանց նախապաշտական աւանդած այդպիսի գործավարական եղանակէն հաստատապէս վերահասու եղած են որ ստրկութեան տակ ճմլուած ու ճնշուած ժողովրդի հետ գործ առնելուց երբէք չեն վնասուիր: Եւ արդարև նոքա յանձն առնելով կապալառուական այդ գործը, այնուհետև ոչ մի ստոր և կեղեքիչ միջոց չեն խնայի մեծաքանակ վաստակ ունենալու համար: Իսկ իրանց այդ անիրաւ և անարդար մտադրութեանց հասնելու համար ոչ մի միջոց չի պակասի և ո՛չ ալ մի թեթև դժուարութեան հանդիպումը:

Նոքա, ահա թէ որպիսի միջոցներ ունին, դարերէն ի վեր օսմանեան կայսրներէն ֆերմաններով սահմանադրուած տասանորդի տուրքը, որ այժմ լոկ տառացի նշանակութիւն է մնացեր, փոխանակ իսկութեան չափով ստանալու, կըստանան իրանց քմաց ու հաճոյքի, չափած ու ձևածի համաձայն եօթին՝ մէկ (տասին՝ մէկի փոխարէն), և իւրաքանչիւր շնիկ (հացահատիկի չափ) ևս գլուխ, այսինքն առանց մալաշխա (հաւասարացնելու գործիք): Թո՛ղ այս ակնյայտնի գործ դրած անիրաւութեան ու անխղճութեան, շատ անգամ ևս՝ յարմար դէպքերին մի դաւադիր դիտումով կ'եղծեն շէջմէ (մաքրուած հացահատիկների կոյտ) Թամղը (տէրութիւնից հաստատուած կնիք) և այդ պարագային՝ որպէս աւազակութեան ծանր ու խիստ յանցանքի մէջ բռնուած ու նկատուած մէկի ապրանքը՝ կարծես խղճի խաղաղ անդորրութեամբ կը գրաւեն այն ամբողջ շեղջը, որի կնիքը ինչպէս տեսանք, եղծուած էր: Իսկ ինչ կը վերաբերի միւս մնացած խոտի, պտուղի, այգիների և այլ բանջարանոցների եղած տասանորդների հաւաքման ու ստացմանը, արդարութիւնը կը պահանջէ, ասել, որ նոքա ուղղակի կը վերաբերուին այնպէս, ինչպէս առակի կարգն անցած մի աւազակ չարագործի այն ասացուածը, որ լեռնակիրճերի մէկու մէջ, մի անմարդ ու ամայի վայր, իւր հրոսակային խմբով պատահելով մի մանրածախս թափառականի (չարչի), անմիջապէս կը կանգնացնի նորան և ցանկութիւն կը յայտնէ գնով առնել նորա ունեցած թէ ամբողջ ճոթեղէն և թէ միւս եղած ապրանքը: Չարչին առհարկին ընդունելով նորա այդ առաջարկութիւնը, կուզէ օրինական կանգուն-հալապիով (չափս) չափել ու ձևել, կշռել, ու հաշուել իւր ունեցած ապրանքը ու ըստ այնմ մատուցանել. իսկ աւազակը մերժելով նորա չափսը՝ ստիպմամբ կառաջարկէ ամեն ինչ կտրել ու չափել իւր ձեռքի ունեցած տէգ-մզրաղով՝ սրտմտած աւելացնելով լակոնական ոճով՝ «Ֆլմ, սաս կըր, չիխսա սուգէ՝ կազը պըչուգէ» (ըստրուկ հայ, լռիր, ինչպէս տեղնէ, արշին դեռ փոքր է):

Ինչպէս շահնաներին, նոյնպէս ևս սոցա և իրենց անասնոց համար եղած ամեն մի ծախսը՝ սկսած բնակարանից մինչև ուտելեղէնն ու դարմանեղէնը՝ ձրի է, ձրի կը լինի նոյնպէս երկու սէյսի (ծառայ) ևս, մինչդեռ ըստ սահմանադրեալ ու վաւերացեալ օրինաց նոքա պարտական են ամեն ինչ՝ բնակարան, ծառայ, լուացք, ուտելեղէն, այն ևս պիտի լինի գիւղում ճանաչուած ամենապատուական կերակուրներ, ձիերի ուտելիք՝ գարի, առվուտ, խոտ, գարէ յարդ, նոցա ախոռատուն և ծառայ սէյսները պէտք է անպատճառ լինին մի որոշեալ վարձով:

Գեղջուկ ժողովուրդը, որպէս տարեկան տուրք՝ կառավարութեան կը վճարէ 1, նուֆուս (զինուորական անհատական հարկ)՝ 40 ղուրշ, 2, ամլաք (կալուածական) 100-ին՝ 10 ղուրշ, 3, ամլիա (բանուորական տուրք անհատի մը) 3 ղուրշ, 4, խամջուր (ոչխար մաքու տուրք, մէկին) 3 ղուրշ, 5, խամջուր (այծի տուրք մէկին) $2\frac{1}{2}$ ղուրշ, 6, խամջուր (Փիլըք-այծի տուրք, մէկին՝ 5 ղուրշ, 7, ինթիսալ (կալուածական վերահաստատութեան տուրք) 100 ին՝ 10 ղուրշ (իսկ շատ խուլ տեղեր ևս 15 ղուրշ), 8, թէշիր (հացահատիկների տասանորդական տուրք ցորենի, աշնցան, գարընցան, գարու, կորեկի, կըլկըլի, կտաւատի, քօշնի, ոսպի, սիսեռի և միւսների) 7-ին՝ մէկ, (մինչդեռ սահմանադրեալը 10-ին մէկ է,) 9, թէշիր (դէմ-խոտի տուրք) խուրձին՝ $2\frac{1}{2}$ ղուրշ, 10, թէշիր (կանկար-խոտի տուրք) խուրձին՝ $1\frac{1}{2}$ ղուրշ, 11, թէշիր (արվուտ-խոտի տուրք) խուրձին՝ 5 ղուրշ, 12, ինթիզամ (բանջարանոցի տուրք) 100 ին՝ 10 ղուրշ, 13, ինթիզամ (այգու տուրք,) 100 ին՝ 6 ղուրշ, 14, խուպուղ (քամած ու ճրմլած գինու տուրք,) 100 ին՝ 8 ղուրշ, 15, ինթիզամ (ծխախոտի տուրք) 100 ին $7\frac{1}{2}$ ղուրշ, 16, ձկան մաքս՝ 100 ին 10 ղուրշ, 17, արագի (հողային տուրք) 100-ին, 6 ղուրշ, 18, գոտ փաբասի (հացահատիկ վաճառի), 100-ին՝ 50 փարա ($1\frac{1}{2}$ ղուրշ), 19, տափու (հաստատական տուրք), 10-ին $5\frac{1}{2}$ ղուրշ, 20, պտուղներին՝ 100 ին՝ 6 ղուրշ, 21, Թամաթօ (վաստակի), 100-ին՝ 10 ղուրշ և ուրիշ պատահական հանգամանքներէն առաջացած հարկեր ու անվերջ տուրքեր:

Այս բոլորիս անգամ դեռ շատ ծերունիներ կան ու խորին հառաչով, բացի միւս հարկերի ու տուրքերի թերի և աննշան վճարքների տասանորդաց մասին՝ կը յիշեն նաև այն երանելի ու անդարձ անցեալը, երբ զինուորական գլխահարկը (նուֆուս) կառավարութեան կողմէն առաջին անգամ դրականապէս պարտադիր կը ճանաչուէր միայն 50 փարայ ($1\frac{1}{4}$ ղուրշ): Այդ նոր պարտադիր օրէնքը, որպէս ի վերուստ շնորհեալ մի շնորհաբաշխութիւն՝ անչափ կուրախացնէ բազմաթիւ միամօրների ծնողաց սրտեր, այն մխիթարական խըրհրդումով, որ իրանց սիրելի զաւակունքն վերջապէս արժանացան 26-30 տարեկան հասակում մտնել տէրութեան դաֆթարի (տօմարի) մէջ, հետևապէս դարձան նորա որդիք: Իրանց զգացած սրտի այդ բուռն ուրախութիւնը բացի զանազան ողջակէզներով ու առատ նուէրներով արտայայտելուց, նոյն իսկ որպէս որոշեալ վճարի՝ մատուցանելիք 50 փարան անգամ կը զարդարեն եղեր բազմերանգ ծոփերով ու յուլունքներով և այնպէս կը վճարէին հարկահաւաքներին: Իսկ այսօր, մնացեր է այդ հին յիշատակի միայն դառն մրուր: Այսօր, հարկաւոր է վերջապէս ասել, երբ նիւթական ու ապրուստի այս ճգնաժամին $1\frac{1}{2}$ ղուրշ հետզհետէ գնալով գնալով աճեր, աւելացեր ու հասեր է մինչև 40 ղուրշի և 25-30 տարեկան հասակը ուղիղ ծննդեան բոպէին, այդ պարագային այլ ևս որդեծնութիւնն անգամ անտանելի պատիժ ու պատուհաս է դարձած ու ճանաչուած: Միթէ, հեշտ է երևակայել, բոպէական աստիճանէն մինչև 15 տարեկան հասակում հազիւ աշխատութեան ընդունակութեան մանուկ-պատանու ազգաս, թշուառ ծնողի մը համար ծանր չէ՞ իւրաքանչիւր տարին 40-ական ղուրշ վճարել՝ բացի վերը թուած անվերջ ու անսահման տուրքերէն, մանաւանդ այնպիսի մի երկրի մէջ, ուր ոչ իւր կայքի ու գոյքի և ոչ ալ պարտուց ու իրաւանց հաւասարութիւն ու չափ կայ...

Տարօնցի:

(Կը շարունակուի)

այդ պաշտօնական տեղեկութիւնք են որ դրականը բացասական կը հասկցունեն և բացասականը դրական։

Վերջին օրերս կառավարութիւն առանձին խնամք մը կը տանէ իր պաշտօնեաներուն և անոնց թոշակներով կը զբաղի. պաշտօնապէս կը յայտարարուի թէ կայսերական իրատէի մը համաձայն դիւանք և գանձարանք սկսած են մէկ մէկ ամսական վճարել կառավարական բոլոր պաշտօնեաներուն և քարտուղարներուն։

Այս ողորմած կառավարութեան նշանակութիւն հարկաւ չեն հասկնար «Արձագանքի» ընթերցողք, զի աշխարհի մէջ ո՛ւր ընդունուած է յայտարարել պաշտօնապէս թէ ծառայողք և պաշտօնավարք իրենց մի ամսական թոշակը կը ստանան, սակայն, մեր երկրին մէջ ազ ալ «բարենորոգութիւն» մ'է, զի հինգ վեց ամիս, նոյն իսկ տարի մը թոշակ չառնող պաշտօնեայի մը համար յանկարծ ամսական թոշակ առնելու շնորհն վայելել, այդ նոյն է թէ Մշեցի հայուն ըսել թէ ալ ասկէ ետք դուն քո կալուածի և աշխատանքի տէրն ես...

Բայց չկարծէք թէ ծառայողք թոշակ չառնելով օգով կը կերակրուէին, ոչ, վըր դովման առանձին նշաններ չէին ցոյց տար, եկամուտներու աղբիւրներ շարունակ կը գտնէին, զի «ոչ գիտէր ձախն, զինչ գործէ աջն»։ Այդ է մեր կառավարութեան իմաստուն տնտեսական նշանաբան։

Ոսկեւոյ գրաւիչ քաղաքականութենէն զատ այլ «ներքին» կարգադրութիւններ ևս կը լինին, որոնց մասին հարկ կը համարիմ գրել նոյնպէս «յայտարարեալ» պաշտօնական աղբիւրներ!։ Փոքր-Ասիոյ բոլոր գաւառներն այժմ տեղի կ'ունենան կուսակալական «պտոյտներ»։ Ամեն կուսակալ կ'ելլէ պտոյտի մը, կը պտտի, «քննութիւն» կը կատարէ և կը վերադառնայ իր տեղ. Այսպէս պաշտօնապէս կը յայտարարուի թէ Սըվազի կուսակալ Խալիլ պէյ կարևոր պաշտօնական պտոյտի էր ելած իրեն յանձնեալ նահանգին «ամեն տեղեր» և յաջողութեամբ ի գըլուխ հանելով այդ քննութիւն վերադարձեր է իր տեղ։

Նոյն տեսակ պտոյտ կատարեր է, ինչպէս կը հաղորդուի պաշտօնապէս, Խարբերդի կուսակալ Էնիս փաշա, որին հրամայուած էր, պտոյտ մը կատարել Արաբկէրի, Կէպանի, Ակնայ շրջանները։ Այդ պտոյտ աւելի արդիւնաւէտ կը հրատարակուի, զի Թիւրք և հայ լրագիրք պարտաւորեալ են ծանուցանել թէ վսեմափայլ կուսակալ «այդ գաւառաց ու գիւղախմբերուն մէջ վարչական, եւմըտական ու թաղապետական շատ մը բարեփոխումներ ի գործ դրած է. Նոյնպէս քանի մը պաշտօնեաներ, որոց անկանոն ընթացք տեսած էր պաշտօնանկ ըրած է և անոնց տեղ կարող և ուղղամիտ անձեր կանգնած է»։—Ըշտէ ազ ալ ձեզ բարենորոգումներ, ա՛լ ինչ կուզէք, կըսէր ինձ երեկ ծիծաղով անգղիական լրագրի մը թղթակից, որ 16 տարիէ ի վեր կը հետևի տաճիկ կառավարութեան ընթացքին և աղէկ կը հասկնայ անոր իւրաքանչիւր քայլ։ Այդ սիրուն կատակին միտքը հարկաւ, կը հասկընաք։ Սակայն նոյն տեսակ յայտարարութիւն ըրած է կառավարութեան կողմէն եւրոպական դեսպանաց, որոց մէջ թուելով այդ «պտոյտներ» կըսուի թէ բարենորոգումներ սկսուած են գործադրուել ի Փոքր Ասիա և թէ ցանկացողք կրնան ստուգել»։ Չակերտներու մէջ դրուած տողեր արտագրուած են շրջանաբերաբար լրկուած պաշտօնական թղթէ։ Այդ պտոյտներուն և բարենորոգումներուն ելք կը յանգի անդ, որ «ապահովութիւնք» վերջանան։ Այս հանդամանք տեղւոյս եւրոպացւոց ժպիտ քրքիջի փոխած է. ուստի այդ քրքիջն ալ մեղմացնելու նպատակաւ նոյնպէս պաշտօնապէս կը յայտարարուի թէ «Մուշի գաւառին Թալորի (Տալուորիկ) անուանեալ տեղը գործուած աւազակութեան արարքները քննելու համար յանձնաժողով կազմուեցաւ Ֆէրիգ-Ապտուլլահ փաշայի նախագահութեամբ և յանձնաժողովն մայրաքաղաքէս ճամբայ ելած է նոյեմբեր 15-ին։ Յանձնաժողովին պաշտօնն է—կըսէ պաշտօնական ծանուցագիրն—[illegible] քննութիւններ կատարել ու տըղիւնքը մատուցանել կայսերական կառավարութեան»։

Այս ամենէն կը հասկանաք թէ ինչ ընդունելութիւն կը պատրաստուի եւրոպական յանձնաժողովին որ կ'երկնու ու չի ծներ...

Ս. Մ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳՂԻԱ.—Բոլոր պետութեանց լրագրները հաստատապէս յայտնում են որ Անգղիայի և Ռուսաստանի համաձայնութեան խնդիրը հաւանական է երևում. բայց անգղիական լրագրները հերքում են թէ առ այժմ որ և է մասնաւոր խնդրի մասին դեռ համաձայնութիւն չէ կայացել։ Հաւանական են համարում որ Անգղիան կ'առաջարկէ Ռուսաստանին միջնորդ դատաւոր լինել իր և Ֆրանսիայի մէջ եգիպտական խնդրում։ Եթէ այդ քաղաքական քայլն իրականանայ, այն ժամանակ աւելի շուտ կը պարզուի Ռուսաստանի և Ֆրանսիայի համաձայնութեան ապագայի խնդիրը։

ԻՏԱԼԻԱ.—Հռոմից հեռագրում են գերմանական լրագրներին, որ Իտալիայում մեծ աղմուկ է հանել պարլամենտի նիստերի փակելը և կարծում են, որ դրան շուտով կը հետևի պալատի նիստերի փակումն։ Կրիսպիի կինը դատ է սկսել Ջիոլիտտի դէմ, այն պատճառաւ, որ վերջինս համարձակուել է նրա մասնաւոր նամակները հրատարակել։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Դեկտեմբերի 13-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Թագաւոր կայսրը ամենաողորմածաբար ընդունել է Միխայելովսկի թնդանօթաձիգ ճեմարանի պատուաւոր նախագահի կոչումը և փոխ-նախագահի կոչումը շընորհել է Մեծ իշխան Միխայէլ Նիկոլայէվիչին։

Բարձրագոյն հրովարտակով Աղէքսանդր կայսր III-ի արձան կանգնեցնելու նպատակով նուիրաբերութիւններ ժողովելու և գործերը վարելու համար Մոսկուայի գեներալ նահանգապետի նախագահութեամբ առանձին յանձնաժողով է հաստատվում, որի մէջ կըմտնեն Մոսկուայի ազնուականաց նահանգական աւագը, Մոսկուայի քաղաքագլուխը և երկու անդամներ, որոնք առանձնապէս կընշանակուեն բարձրագոյն հրամանով։

ՓԱՐԻԶ.—Մարսիէն պալատին առաջարկեց դաւաճանութեան վերաբերեալ օրէնքը, որ ուղարկեց զինուորական յանձնաժողովին։ Փօրէս առաջարկութիւն է ներկայացնում, որ պահանջում է ոչնչացնել մահուան պատիժը զինուորական օրինագրքից։ Պալատը անյետաձգելի է համարում Մէսիէյի ծրագիրը։ Վիճաբանութիւնների ժամանակ պալատում աղմկալի տեսարան տեղի ունեցաւ Փօրէսի և Նախարար Բարտուի մէջ։ Նախագահըն առաջարկում է Փօրէսին ժամանակաւորապէս արտաքսել։ Այդ առաջարկութիւնն ընդունվում է ձայների ահագին մեծամասնութեամբ և Փօրէսը հեռանում է դահլիճից. այդ միջոցին ծարայեղ ձախակողմեանք սարսափելի աղմուկ են բարձրացնում։ Նիստն ընդհատվում է։

Փօրէսը սեկունդատներ է ուղարկել Բարտուի մօտ։ Մենամարտութիւնը կըկայանայ վաղը։ Հասարակապետականների ծերակոյտին Մօրէլն առաջարկում է որ դաւաճանութիւնը քաղաքական յանցանք չհամարուի։

ԼՕՆԴՕՆԻՑ.—Այս շաբաթ Խերոշիմում նաւ կը նստեցնեն 25,000 զինուորներ։ Կօրէայի կառավարութիւնը համաձայնեց միջազգային առևտրի համար բանալ կըկին երկու նաւահանգիստներ՝ Մօկպօ և Հուժամպօ։

Հիւսիսային Մանջուրիայի մահմետականներն ապստամբել են։

ՏՕԿԻՕ.—Պարլամենտը բացուեց դահական ճառով, որի մէջ յաղթութիւնների վրայ մատնացոյց լինելուց յետոյ ասվում է թէ ճափոնացիք շարունակում են յարձակումները թըշնամու երկրում, չը նայելով ցրտերէն և զրկանքներին, թէ Ճափոնիան պահպանում է նոյն բարեկամական յարաբերութիւնները չէզօք տէրութեանց հետ և որ մի քանի պետութեանց հետ ունեցած դաշնագրերի վերաքննութիւնն արդէն վերջացած է, իսկ միւսներինը արագ շարունակվում է։

Դեկտ. 14 ից

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Գեներմանիայի կայսեր մօտ դեսպան եղած կոմս Շուվալովը նշանակուած է Վարշավայի գեներալ-նահանգապետ և Վարշավայի շրջանի զօրաց հրամանատար։

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԲԺԻՇԿՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների.

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.

Դ. Գ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ռ. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ե. Ի. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½, ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցումը ընդունւում են և ՏԻՖԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Ն[illegible]

ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ.
ԲԺՇԿ. ԴՕԿՏՕՐ
ԱՒԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ
Սօլօլակ, Սերգիեվսկի փողոց № 14.

Բացի դեղերից գործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, Է ԼԵԿՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ, և այլ ֆիզիքական մեթօդներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԵԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ
ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը	կիներմատների և երեխաներ
1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյեան	տղամարդիկ։

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ — մասսաժանող կին և մասսաժիստ պարոն։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Մուխրանեան փ., տ. Կուզանեանի, № 15. հիմնել են Թիֆլիզի քաղաքացիները երբեմն հիւանդների համար 1866 թ. ապրիլի 4-ի յիշատակին)։

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր, բացի կիրակի օրերից, ձմեռն առաւօտեան ժամը 9—1, ամառը (յունիսի, յուլիսի և օգոստոսի) առաւ. ժամը 8—12.

Վ. Մ. [illegible]—ներքին, երեխանց և ջղային հիւ. ժամը 10½—12 ամեն. օր։

Կ. Ա. [illegible]—ներքին և երեխանց, ժ. 10½—12 ամեն օր։

Գ. Գ. [illegible]—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 11—12 ամեն օր։

Ս. Ն. Լեւին—խիրուրդ. և մէզի անդ. ժ. 11—12 ամեն օր։

Մ. Ա. [illegible]—ներքին և վեներական, ժ. 12—1 (երկ. չոր. և շաբ. օր.)

Ա. Գ. [illegible]—ականջի, կոկորդի և քթի, ժ. 9—10 ամեն օր, բացի հինգշաբթի օրուանից։

Կին-բժ. Մ. Ա. [illegible]—կանանց ժ. 9—11 ամեն օր։

Ն. Գ. [illegible] — ներքին և երեխանց, ժամը 12—1 ամեն օր։

Կին-բժ. Լ. Ե. [illegible]—կանանց, ժամը 11—12 ամեն օր։

Ե. Ս. [illegible]—ներքին, երեխանց և ատամի, ժամը 9—10 ամեն օր։

Մ. Ա. [illegible]—ներքին և ջղային, ժամը 11—12 ամեն օր։

Գ. Ն. [illegible]—ներքին, մէզի անդ. և վեներական, ժամը 11—12 ամեն օր։

Գ. Ա. Թարխանեան — ներքին և խիրուրգ., ժ. 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. [illegible]—աչքի և կանանց, ժամը 11—12 ամեն օր։

Ատամն. բոյժ Ա. Օ. Օրբէլի—ատամներ, ժամը 10—11 ամեն օր։

Կոնսուլտացիոնը երեքշաբթի և ուրբաթ օրերը ժ. 12—1. Ծաղկի պատուաստումն—չորեքշաբթի և շաբաթ օրերը, ժամը 9—1։

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Կախէթինսկայա փ., տ. Տէրտէրեանի)

Մ. Ա. [illegible]—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. [illegible]—կանանց, ժ. 11—12 երեքշաբթի և ուրբաթ օրերը։

ԽԱՐՓՈՒԽԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Բաննիա փողոտ, տ. Ենֆիաճեանի)

Գ. Բ. Տէր-[illegible]—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. [illegible]—կանանց, ժ. 11—1 երեքշաբթի և ուրբաթ օրերը։

[illegible].—Չքաւոր անձերին բըժշկական խորհուրդ և դեղեր տրւում են ձրի։

Քաղաքային բուժարանի կառավարիչ՝—
Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ
ՎՐԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 7 ժամին, գիշերում է Մ'լէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղևորվում է առաւօտեան 9 ժամին, գիշերում է Պասանաուր կայարանում, հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 9 և 50 րոպ.-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 6 և 50 րոպէին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ 5 ժամին և առանց գիշերելու հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը 6 ժամին 50 րոպ. երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Մ'լէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին 25 րոպ. երեկոյեան։

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղարկվում է առաւօտեան ժամը 9-ին, գիշերում է Գուդաուր կայարանում, հասնումէ Թիֆլիզ հետևեալ օրը ժամը 9-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամի 6-ին և 40 րոպէին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ ժամը 5-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը 8 ժամին 26 րոպէին երեկոյեան։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. և 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ախտուրան գնացքը Թիֆլիզից Միխայլով դուրս է գնում ճաշից յետոյ 3 ժամին և հասնում է Միխայլովո երեկոյեան 7 ժ. 15 ր.։

Միխայլովոյից Թիֆլիզ՝ դուրս է գալիս գիշերուայ 1 ժ. 30 րոպէին և հասնում է Թիֆլիզ առաւօտեան 8 ժ. 15 ր.

Ապրանք-մարդատար գնացքը Թիֆլիզից Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժամին 27 ր., հասնում է Գանձակ 7 ժ. 35 ր. առաւօտեան։

Գանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժ., հասնում առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐ ՖՈՆՈԳՐԱՖ

ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԻ ՆԱԽԿԻՆ ՔԱՐՎԱՆՍԱՐԱՅՈՒՄ № 111

Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ հասարակութեան թէ Ամերիկայէն բերած եմ մեծահամբաւ հնարագէտ պ. ԷԴԻՍՕՆԻ նշանաւոր գիւտերէն ՖՈՆՈԳՐԱՖԻ կատարելագործութիւնը, որով ցանկացողք կրնան լսել [illegible] նշանաւոր երգիչներու երգերն ու նուագներն, նաև 12 րոպէի մէջ իրանց իսկական ձայներն ու խօսքերը։

Յաճախորդ կ'ընդունուի ամեն օր առաւօտեան ժամը 10—2, իսկ երեկոյեան՝ 3—9. 9-րդ ժամէն վերջ ընտանեկան շրջաններում մասնաւոր (գոնէս) կը դրուի՝ առանձին վճարքով և ուր կը բացատրուին մեքենայի ամբողջ հետաքրքրական գործողութիւնք։ Մուտքն արժէ 20 կոպէկ, իւրաքանչիւր անհատ կրնայ միայն լսել երկու եղանակի ձայներ. 2 մարդ՝ 2 եղանակ, 3 մարդ՝ 3 եղանակ, 4 մարդ՝ 4 եղանակ, 5 մարդ՝ 6 եղանակ, 6 մարդ՝ 7 եղանակ և այսպէս կը բարձրանայ մինչև 12—15 երգ-նուագների ձևեր ու եղանակներ։

4—1 [illegible]

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ՍՏԱՆԻՍԼԱՎ ՇԱՐԱԽՉԻԱՆՈՎԻ

Articles de Paris et Nouveautées. Stanislav Charakchianoff

Maison fondée en 1870

(Դվօրցովայա փողոց, շտաբի հանդէպը)

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՆՈՐԱՁԵՒ ԵՒ ԳԱԼԱՆՏԵՐԻԱՅԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ.—

ԿՕՐՍԵՏՆԵՐ 2 ռ. 50 կ.-ից սկսած։ ԳԼԽԱՐԿՆԵՐ տղամարդկանց համար։ ԱՆՈՒՇԱՀՈՏՈՒԹԻՒՆՆԵՐ—անուշաբոյր օծանելիք՝ գլխաւոր գործարաններից։ Ձեռնոցներ, գոլցաններ, հովանոցներ, ծաղիկներ, հովհարներ, ալբոմներ, նեսեսէրներ, պօրտ-մօնէ։ Բիւրեղեայ, յաղճապակեայ զարդարանքի իրեղէններ։ Զքեղ իրեր ընծաների համար, խաղալիք և տիկնիկներ։

Օտարաքաղաքացոց պատուէրները կատարվում են ամենայն ճշդութեամբ։ (100—53)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ (ՊԱՏԻ) ՕՐԱՑՈՅՑԸ
1895 Թ.
ՀՍՐՈՒՍՏ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՄԲ
ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հատը 60 կ. ճանապարհի ծախքով՝ 75 կոպէկ։

Մինչև	50	օրինակ գնողին	15%	զեղջ
»	100	»	20	»
»	200	»	25	»
»	300 և աւելի	»	30	»

Ճանապարհի ծախքը գնողի վերայ է։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ԺՈՂՈՎԱԾՈՒԻ

Դ. և Ե. գրքերի համար. բաժանորդագինն է 3 ռ.։

Գիւտ քահ. Աղանեանց։

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԵՆ.—

			Ռ.	Կ.
1.	Ջիւրի,	Ֆրանկլին, 2 տիպ. սպառուած	—	—
2.	»	Վարշինգտոն, 2 տիպ »	—	—
3.	»	Հոմերի Իլիականը, պատկերներով	1	—
4.	»	Հոմերի Ոդիսականը, »	1	20
5.	»	Ուէլնինկէ աղուէսը,	—	60
6.	Սմայլս,	Բնաւորութիւն	1	50
7.	»	Ինքնօգնութիւն	1	50
8.	Ա[illegible],	Սիրտ	1	—
9.	»	Ապէնիններից մինչև Անդէրը	—	20
10.	»	Ռուստեմ և Զօհրաբ	—	20
11.	Ջիլլեր,	Աւազակներ, ողբերգութիւն	—	50
12.	Տ[illegible],	Ռօբինզօն, փոքրերի համար	—	20
13.	»	Կոլումբ, » »	—	15
14.	Հոյզէ,	Բէատրիչէ, վէպիկ	—	30
15.	»	Նոնցայի բերդը, վէպիկ	—	30
16.	Վ[illegible],	Հաւատարիմ Սավիտրին *).	—	10
17.	Ի[illegible],	Մահմեդի կեանքը	1	20

ՇՈՒՏՈՎ ԿԸ ՏՊՈՒԻ՝

2. Դ[illegible], Դաւիթ Կօպպերֆիլդ, երեք հատոր, անգլիերէնից։

Վաճառվում են թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Маріино-Анановское училище, և կենդրոնական գրավաճառանոցում։

*) Տպագր. հրատարակչ. Ընկեր.

ԲԱՆՈՒՈՐՆԵՐ

Ամուսնացած, աշխատանքի ընդունակ զաւակներով, կարող են լաւ վարձ և յարատև պարապմունք գտնել ԵՂԲ. ԳՕԼԴԼԻՍՏՆԵՐԻ Լուցկիների գործարանում։ Դիմել գործարանը, Վերայի ետևից Դիդուբէի հանդէպ, պ. կառավարչին։ (30—28)

Յանկացողները գրուել VIII դասընթացքին ԽՈՀԱՐԱՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ, կարող են դիմել ներկայումս կար ու ձևի ուսումնարանում Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան։ Հանովի փողոց, տուն № 25. 2—2

Дозволноецензурою Тифлисъ 15-го Декабря, 1894 года. Տպարան Յ. Մարտիրոսեանցի Типографія И. Мартиросіанца, на Орбел. ул., № 1—2